Azg
Հայկական daily
12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2000 ՀԻՆԳՇԱԲԹԻ 181 (2149)

Նոյեմբերին սպասվում է Պուտինի այցը Հայաստան

ԵՐԵՎԱՆ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐ: Այս տարվա նոյեմբերին սպասվում է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի այցը Հայաստան: Այդ մասին հաղորդեց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը՝ վկայակոչելով Երեւանում Ռուսաստանյան Դաշնության դեսպանատնից ԳԱԱ ստացած պաշտոնական նամակը:

Նրա ասելով, նամակում կա նաեւ խնդրանք Բաղրամյանի անվան պողոտայում գտնվող Լեզվի ինստիտուտի շենքի բարեկարգման մասին: Ֆ. Սարգսյանը նշեց, որ Լեզվի ինստիտուտը պատկանում է ԳԱԱ-ին, սակայն, դժբախտաբար, ներկայումս այնտեղ տարածքներ են զբաղեցնում նաեւ ուրիշ կազմակերպություններ, ինչով եւ պայմանավորված է շենքի ներկայիս անբարեկարգ վիճակը:

Ըստ երեւույթին, Ռուսաստանի նախագահի այցը տարածաշրջանային բնույթ կկրի: Բաքվի «Թուրան» գործակալության հաղորդման համաձայն, նոյեմբերին ծրագրված է Վլադիմիր Պուտինի ժամանումը Բաքու: Ռուսական պետության ղեկավարին սպասում են նաեւ Թբիլիսիում, չնչելով, սակայն, որոշակի ժամկետ:

ՇԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-ն անտարբերությամբ է վերաբերվում հակահայերի մասին թուրքերի հայտարարություններին

ՀԱԿՈԲ ՇԱՐԲՏԱՆ

Երեկ «Առավոտյան լրատվություն» ծրագրով, որ հեռարձակվում է ամեն օր, թուրքական պետհեռուստատեսությունը վերստին անդրադարձավ Հայոց ցեղասպանության թիվ 398 բանաձեւին: Հաղորդման համաձայն բանաձեւի քննարկումը Ներկայացուցիչների պալատում ենթադրաբար տեղի կունենա այսօր: Թուրքիայի համար կարեւորը, սակայն, ոչ այնքան դրա քննարկումն է, որքան ընդունման հավանականությունը: Թուրքական աղբյուրները մտահոգությամբ են արտահայտվում այդ մասին, իսկ հեռուստատեսության սեփական թղթակից Նուրայ Օզքուրը, հենվելով անկախ դիտորդների վրա, Նյու Յորքից տեղեկացնում է, որ Ներկայացուցիչների պալատը հավանաբար կընդունի բանաձեւը:

Երեկ Ներկայացուցիչների պալատի կանոնակարգային խորհրդի ձեռքում էր գտնվում թիվ 398 բանաձեւը, որոշելու դրա քվեարկության դրվելու եղանակը: Մյուս կողմից, Ներկայացուցիչների պալատի հոկտեմբերի 19-ին նախատեսվող արձակուրդի մի քանի օրով հետաձգումը հաստատվում է: Այլ կերպ՝ քննարկումների հնարավոր հետաձգման դեպքում բանաձեւի կողմնակիցներն իրենց տրամադրության տակ կունենան եւս մի քանի օր:

Համենայն դեպս, ժամանակը Թուրքիայի օգտին չի աշխատում, իսկ դա հավասարակշռությունից հանում է ինչպես թուրքական քաղաքական շրջանակներին, այնպես էլ մամուլին: Վերջիններիս են միանում Մեջլիսի պատգամավորներն ու կուսակցական գործիչները, եւ նրանք միահամուռ ուժերով հակահայկական հիստերիայի ալիք են բարձրացնում երկրի ողջ տարածքում: Չեն դադարում Հայաստանի դեմ ուղղված կատաղի հարձակումները: Հայերին հասցեագրված սպառնալիքները ոչ մի սահման չեն ճանաչում: Թուրքական կատաղի հարձակումների թիրախ է դառնում նաեւ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, պատճառաբանությամբ, թե իբր նա է դրդել հայկական լոբբիին, որպեսզի վերջինս Ներկայացուցիչների պալատում բարձրացնի Հայոց ցեղասպանության հարցը:

Տես էջ 3

ՄԻՋԵԿԵՂԵՑԻԿԱՆ

Ամենայն հայոց կաթողիկոսը կայցելի Եգիպտոս եւ Եթովպիա

ԷՋՄԻԱԾԻՆ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 12-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը ղոչի ուղղափառ եկեղեցու պետ Շնուդա Գ-ի հրավերով կայցելի Եգիպտոս: Հնգօրյա այցի ավարտին Վեհափառ Հայրապետը Եթովպիայի Թեւահեդո եկեղեցու պետ Աբունա Պաուլոս պատրիարքի հրավերով կմեկնի Եթովպիա:

Ինչպես «Նոյյան տապանին» հայտնում են Մայր Աթոռի տեղեկատվության համակարգից, Վեհափառ Հայրապետը մի շարք հանդիպումներ կունենա ղոչի եկեղեցու հոգեւոր պետ Շնուդա Գ-ի հետ, կայցելի ղոչի եկեղեցու վանքեր, կծանոթանա նրանց գործունեությանը:

Եգիպտոսում նախատեսվում են նաեւ հանդիպումներ այլ եկեղեցիների ու կրոնների հոգեւոր առաջնորդների, ինչպես նաեւ Եգիպտոսի պետական այրերի հետ: Հայոց Հայրապետը կայցելի Ալ Ազհարի շեյխ Մեծ իմամ Ալ Թանտաուիի նստավայր եւ կհանդիպի Ալ Ազհարի շեյխի հետ: Տեղի կունենա հանդիպում Եգիպտոսի Հանրապետության մուֆթիի հետ: Ալեքսանդրիայի հունաց պատրիարքարանում նորին Սրբությունը հանդիպում կունենա Պետրոս 7-րդ հույն օրթոդոքս պատրիարքի հետ:

Վեհափառ Հայրապետը կայցելի Կահիրեի հայոց առաջնորդանիստ Սբ. Գրիգոր Լուսավորիչ տաճար եւ Ալեքսանդրիայի Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցի, հանդիպում կունենա հայ համայնքի հետ, կայցելի ՀՀ դեսպանատուն:

Հոկտեմբերի 18-21-ը Վեհափառ Հայրապետը կլինի Եթովպիայի Թեւահեդո ուղղափառ եկեղեցու հյուր:

Ամենայն Հայոց կաթողիկոսը Մայր Աթոռ կվերադառնա հոկտեմբերի 22-ին:

Նոյեմբերի 7-9-ը Եվրախորհուրդը վերջնական որոշում կընդունի Հայաստանի անդամակցության վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ, 11 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆԱՐ: Հայկական կողմը դրականորեն է վերաբերվում Հայաստանի եւ Ադրբեջանի միաժամանակյա անդամակցությանը Եվրախորհրդին: Սակայն հարցի նման դրվածքին համաձայնել կարելի է միայն մինչեւ Ադրբեջանի խորհրդարանական ընտրությունները՝ մինչեւ նոյեմբերի 5-ը: Եթե ընտրություններն Ադրբեջանում ճանաչվեն որպես Եվրախորհրդի չափանիշներին չհամապատասխանող, ապա պարզապես ծիծաղելի կլինի Եվրախորհրդին Հայաստանի անդամակցությունը կապել Ադրբեջանի համանման հարցի հետ: Այդ մասին հայտարարեց ՀՀ Ազգային ժողովի արտաքին կապերի հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանը:

Նրա ասելով, ներկայումս Ստրասբուրգում է գտնվում Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը, որը մասնակցում է Եվրախորհրդի անդամ երկրների ԱԳՆ ղեկավարների նիստին: Նախարարն այդ հնարավորությունը կօգտագործի 5-6 պետությունների ներկայացուցիչների հետ հանդիպելու համար: Հանդիպումների ընթացքում կքննարկվեն ԵԽ-ին Հայաստանի անդամակցության տարբերակները:

Հովհաննիսյանը հաղորդեց, որ հոկտեմբերի 18-ին կկայանա Եվրախորհրդի երկրների արտգործնախարարությունների ներկայացուցիչների կաբինետի նիստը, որից Հայաստանը լուրջ որոշումներ է ակնկալում: Հոկտեմբերի 26-ին կկայանա երկրորդ համանման նիստը: Այդ երկու նիստերի արդյունքում շատ բան կպարզվի: Իսկ եթե դրանց ընթացքում էլ վերջնական որոշում չկայացվի, ապա նոյեմբերի 8-9-ը Ստրասբուրգում կկայանա եւս մեկ նիստ, որը եւ եզրափակիչ վճիռ կկայացնի:

Ադրբեջանում ժողովրդավարական ընտրություններ կայանալու դեպքում երկու պետություններն էլ զուգահեռաբար կանդամակցեն Եվրախորհրդին, հակառակ դեպքում խոսք կգնա այդ հեղինակավոր կազմակերպության կազմում միայն Հայաստանին ընդգրկելու մասին, նշեց Հովհաննիսյանը:

Արմենտելը եւ Դիեգո-Գարսիա կղզու սեխ-էրոտիկ ծառայությունները

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այն պահին, երբ Հայաստանի կառավարական պատվիրակությունն արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի գլխավորությամբ Աթենքում բանակցություններ էր վարում հունական OTE-ի հետ Արմենտելի վերաբերյալ կնքած համաձայնագրի մեջ փոփոխություններ կատարելու նպատակով, վերջինս շարունակում է «անակնկալներ» մատուցել մեզ: ԵՊՀՀ մեթենաբինական ֆակուլտետի դասախոս Լեոնիդ Վարդանյանի հետ պատահած միջադեպն ուղղակի զավեշտական կարելի է համարել, ինչին անգամ ամենավառ երեւակայություն եւ հումորի զգացում ունեցող մարդը չի կարող ենթադրել: Վերջինիս 53-58-53 հեռախոսահամարին է վերագրվել 20170 դրամ արժեքով միջազգային հեռախոսակապ... Դիեգո-Գարսիա կղզու թիվ 246 կողի 81-16 հեռախոսահամարի հետ: Կղզու հետ որեւէ ազգակցական կամ ընկերական կապ չունեցող Լեոնիդ Վարդանյանը նախ հետաքրքրվել էր, թե դա ի՞նչ կղզի է եւ որտեղ է գտնվում: Պարզվել է, որ կղզին գտնվում է Հնդկական օվկիանոսում, ունի 25 քառ. կմ տարածք, մոտ 100 բնակիչ, այնտեղ տեղակայված է ամերիկյան զինվորական բազա:

Տես էջ 2

Բիշքեկում ստորագրվեց տարածաշրջանային անվտանգության համաձայնագիր

ԲԻՇՔԵԿ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐ: Հոկտեմբերի 11-ին Բիշքեկում հավաքական անվտանգության պայմանագրի անդամ պետությունների ղեկավարները համաձայնագիր են ստորագրել՝ տարածաշրջանային հավաքական անվտանգության ուժերի եւ միջոցների կարգավիճակի շուրջ: Փաստաթղթի տակ իրենց ստորագրություններն են դրել Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Ռուսաստանի եւ Տաջիկստանի ղեկավարները: Հաստատվել է ընդհանուր առմամբ անվտանգության համակարգերի կազմավորմանը նպատակաուղղված միջոցառումների ծրագիրը: Փաստաթուղթը ենթադրում է զորակազմավորումների գործադրման հնարավորությունը պայմանագրի մասնակից երկրներից մեկում անվտանգությանը սպառնացող վտանգի ծագման դեպքում:

Վտանգավոր նոր վիրուս համակարգչային ցանցերում

Եթե «Lets watch TV» բառերով սկսվող որեւէ էլեկտրոնային նամակ ստանաք, չբացե՛ք, այն ջնջելու է ամեն ինչ, որ կա ձեր համակարգչի հիշողության մեջ: Վտանգավոր այս վիրուսի մասին առաջին ահազանգը հնչել է IBM-ից: AOL-ը տեղեկացնում է, որ KALI կոչվող այս վիրուսը շատ ավելի վտանգավոր է, քան "Mellisauh" եւ առայժմ ոչ մեկ դարման չունի: Այն փչացնում է ինչպես Մակինտոշ, այնպես էլ Այ Բի Էմ համակարգիչների հիշողությունը: Վիրուսն ստեղծվել է Netscape Navigator եւ Microsoft Internet Explorer-ում «աշխատելու» համար:

Հիշե՛ք՝ մի գործադրեք հետեւյալ file attechment-ները. – buddylist.exe, calcu 18r.exe, deathpr.exe, einstein.exe, happ.exe, happy99.exe, japanese.exe, keypress.exe, kitty.exe, teletubb.exe: Վտանգն անմիջական է:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Խորհրդարանը գիտության մասին է մտածում

ՀՀԿ-ն կրակի հետ է խաղում

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը տեղեկացրեց, որ ՀԺԿ-ն կառավարության գործունեության համար հայտարարությամբ պատասխանատվություն է վերցրել: Սակայն զարմանալին ոչ այնքան վարչապետի խոսքերն էին, թե «ես այդ հայտարարությունը չեմ կարդացել», որքան նրա հակասական դիրքորոշումները: Մի կողմից նա այդքան վստահորեն պնդում է, թե ՀԺԿ-ն կիսում է պատասխանատվությունը, մյուս կողմից՝ դեռեւս հարցականի տակ է դնում խորհրդարանում «ստատուս քվոյի» պահպանումը՝ ասելով, որ այն կիստակեցվի բանակցությունների արդյունքում, որոնք դեռեւս ինտենսիվորեն շարունակվում են: Ընդ որում, ոչ միայն «Միասնության» այդ թեւի, այլեւ մնացած «այն ուժերի հետ, որոնք ուզում են դուրս գալ այս վիճակից»: Վարչապետը թերեւս նկատի ունի հայտնի վեցյակին, որի հետ քաղաքական այդ գործընթացները տարվում էին հիմնականում հենց իր մոտ, ինչը նա անձամբ բացատրեց ոչ թե իր՝ գործադիր իշխանության, այլ ՀՀԿ-ի ղեկավար լինելու հանգամանքով: Անհեթեթ է նաեւ այն, որ այդ դեպքում Ա. Մարգարյանը կառավարությունում «առայժմ» փոփոխություններ չի նախատեսում: Եթե ՀԺԿ-ն իրոք պատասխանատվության մաս է ստանձնել, ապա նա կառավարությունում տեղեր պետք է ակնկալեր եւ, ինչ խոսք, ստանար, ինչը վարչապետի խոսքերից չէր երեւում: Նշանակում է՝ ՀՀԿ-ն կամ սպասում է Սահմանադրական դատարանի որոշմանը (քանի որ ՀԺԿ-ն մեծ հույսեր է կապում դրա հետ), կամ նման հայտարարություն իրականում չի եղել: Ի դեպ, ժողովրդական կուսակցության անդամ, Աժ անկախ պատգամավոր Մանուկ Գասպարյանն ակնարկեց, որ նման հայտարարություն ոչ եղել է, ոչ էլ կլինի, իսկ իրենք կառավարությանը միայն սատարում են: Ամեն դեպքում ակնհայտ է, որ երկու թեւերը եւ խորհրդարանական փոքրամասնություններն սպասում են ԱԴ-ի որոշմանը, իսկ վարչապետի հայտնած տեղեկություններն ավելին չեն, քան դրությունից դուրս գալու անհաջող փորձեր:

Տես էջ 8

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱԿ

Երեկ Երեւանից շուրջ 150 հայեր 3 ավտոբուսով ուղեւորվեցին Թուրքիա: Ուղեւորվեցին մտահոգությամբ ու ափսոսանքով, որ մինչեւ հոկտեմբերի 15-ը ստիպված պիտի լինեն վերադառնալ, եթե Անկարան իսկապես զրկի Հայաստանի քաղաքացիներին Թուրքիայի սահմանակցերում եւ օդակայաններում մուտքի վիզա ստանալու իրավունքից (եւ եթե հայկական մի հնար չգտնեն մնալու): Մեկնեցին վերջին անգամվա տագնապով, որ գուցե այլեւս չկարողանան Թուրքիայից Հայաստան առեւտուր անել: «Ի՞նչ ցեղասպանություն, մեր աբ-

բյունների հայաստանյան գրասենյակներ, որտեղ չեն խուսափում, ասենք, սեղանին ունենալ Հայաստանի եւ Թուրքիայի դրոշները միասին:

Քանի դեռ ԱՄՆ Կոնգրեսի 398 բանաձեւի աղմուկը չկար, այս կազմակերպություններից յուրաքանչյուրը շաբաթական 2 ավտոբուս ուղեւորներ էր ճանապարհում Թուրքիա, որոնցից շատերը խախտում էին այնտեղ 1 ամիս մնալու իրենց իրավունքն, աշխատում ամիսներ շարունակ եւ նոր միայն գնումներով վերադառնում հայրենիք: Ավելի ծիծ, տոնավաճառներ: Այնտեղ մնացած ժամանակ էլ, ուղեւորների

նախնիներ չե՞ք ունեցել» հարցին պատասխանում էին տարակուսած հայացքով՝ փորձելով հասկանալ, թե ինչ կապ ունի այստեղ այդ հարցադրումը:

Ավտոբուսներն արդեն շարժվելու էին դեպի հարեւան Թուրքիա, ATV-ի օդերեւույթը վերջին հնարավոր կադրերն էր նկարահանում, իսկ ոսկյա զարդերի մեջ հեղեղված երիտասարդ մի կին դեռ շարունակում էր հայերեն ու թուրքերեն բացատրել, որ Հայաստանում պահածոներն արդեն սպառվել են, եւ երեխաներին կերակրելու համար բերում են թուրքական պահածոներ:

«Հայոց ցեղասպանության ճանաչումը լավ կլինի մի կողմից, հայ եմ, չէ՞, բայց մյուս կողմից...»

ԱՄՆ Կոնգրեսի բանաձեւի արշագանքները միանշանակ չեն Երեւանում...

խանութի աղբյուրը փակվում է», հարձակվում էին ուղեւորները տողերիս հեղինակի վրա բողոքելով ԱՄՆ Կոնգրեսի ֆնարկելիք Հայոց ցեղասպանության բանաձեւի դեմ: Եվ, հուզված կանանցով, ԱՄՆ կառավարության ու Կոնգրեսի, Հայաստանի իշխանությունների հասցեին ուղղված լուսանքներով, պատմական «մոռացված» իրողություններին մարմին տալու «անիմաստության» պնդումներով տեսարանը վավերացնում էին թուրքական ATV հեռուստաընկերության լրագրողն ու օդերեւույթը: Թուրք վարորդների ոգեւորող աջակցությամբ ընտանիքներ պահող հերոս կանանց նրանք կանգնեցնում էին տեսախցիկի առաջ, ու վերջիններս իրենց զայրույթն էին արտահայտում, ի դեմ, տահուն թուրքերենով: Իսկ թուրքերեն սովորել են, ֆանգի, իրենց իսկ պնդումներով, 1991-ից Հայաստան-Թուրքիա ճանապարհին են, կամ դասական զբաղմունք դարձած առեւտրով են զբաղվում, կամ թուրքական ընտանիքներում տնային աշխատանքներով, կամ... այս մասին բարձրաձայն չեն խոսում:

Բայց 1991-ից չէ, որ ուղեւորությունները Թուրքիա կանոնակարգված են եղել ինչպես հիմա: Այսօր Երեւանում կա ավտոբուսներով Ստամբուլ ուղեւոր տեղափոխող 4 միջնորդ կազմակերպություն, այսինքն թուրքական կազմակերպու-

հավաստմամբ, զբաղվում էին նաեւ հայկական կոնյակի վաճառով: Կազմակերպությունների տնօրենների հետ պարզեցինք, որ ոչ միայն այս անգամ էին հիմնականում կանայք մեկնում, այլեւ օրինաչափորեն կանայք գերազանցում են տղամարդկանց յուրաքանչյուր ավտոբուսում 35 կին, 10 տղամարդ հարաբերությամբ:

«Բիզնեսն ու քաղաքականությունը մի խառնեք իրար եւ մի խանգարեք մեզ գործել: Մեզ չի հետաքրքրում, թե ինչ է տեղի ունեցել դարասկզբին», ծայնագրիչիս միջոցով իշխանություններին էին դիմում այդ կանայք: Իսկ «Դուք ցեղասպանված

Ամենայն հավանականությամբ բոլոր այս զայրացկոտ գառանցանքները թուրք լրագրողները ներկայացնելու են որպես հայաստանցիների հասարակական կարծիք: Ցեղասպանության հարցի ճանաչման վերաբերյալ: Իսկ իրենց հեռանկարի առումով խուճապահար հայ առեւտրականները դեռ մի վերջին հնարավորություն ունեն մեկնելու Ստամբուլ՝ ուրբաթ օրը նույն ավտոբուսներով: Սա այն դեպքում, եթե միջնորդ 4 կազմակերպություններն իսկապես դադարեն տոմսեր վաճառել մինչեւ վիզաների կարգի հստակեցումը:

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

Բլեյանն ու դատախազությունը որոշել են մրցակցել իրենց համառությամբ

Կրթության եւ գիտության նախկին նախարար Ասոն Բլեյանն, իր ասելով, որոշել էր հրաժարվել վիճաբանական ճաթից: Բանն այն է, որ պետական մեղադրողները մեղադրական ճառն ընթերցել էին փակ դռների ետեւում, եւ ինքը լրատվամիջոցներից է իմացել, որ իրեն 8 տարվա ազատազրկման դատապարտելու միջնորդություն է արվել: Մեղադրական ճառն ընթերցվել էր դռնփակ դատական նիստում, փոխարենը բացել էին վանդակաճաղի դուռը, սեղան էին տրամադրել նրան: Ինչպես ընդունված է ասել նման դեպքերում՝ աշխատանքային նորմալ պայմաններ էին ստեղծել լիարժեք պաշտպանվելու համար: «Ասում եք վիճաբանեմ: Այո, բայց ո՞ւմ հետ, ինչի՞ մասին, հարցնում է նա դատավորին ու ավելացնում՝ ողջ դատական ճնշության ընթացքում ես փորձում էի պարզել, թե քրեական օրենսգրքով արգելված իմ ո՞ր արարքով, ո՞ւմ, որքա՞ն եւ ինչպիսի՞ վնաս եմ հասցրել»:

Վերջին երկու դատական նիստերում Ա. Բլեյանը, ինչպես պարզվեց, դեռեւս խոսում է իրեն ներկայացված 7 մեղադրանքներից մեկի մասին: Խոսել ասվածն ավելի շաս վիրավորանք էր՝ ուղղված երեւանի դատախազության

երեք ներկայացուցիչներին, գտնելով, որ նրանց կամակատարության պատճառով ինքը 1,5 տարի ազատազրկման մեջ է գտնվում: «Դատակները մտան Հայաստան, ես պետք է կալանավորվեի», եզրակացնում է Բլեյանը: Միաժամանակ սպառնում էր, ասելով, որ ինքը կամաց-կամաց ազատում է վանդակը եւ բափուր տեղը շուտով նրանք են զբաղեցնելու: Պետական մեղադրողները փորձում էին սառնասրտություն դրսեւորել եւ չխոչընդոտել ամբաստանյալին՝ օրենքով իրեն վերապահված պաշտպանությունն իրականացնելիս: Իրենք իրենցն ասել էին, կարեւոր չէ, որ ուրիշները չեն լսել: Բլեյանն էլ կեղծիք է համարում բոլոր մեղադրանքները՝ չիմանալով, թե դատախազն ի՞նչ մեղադրանք է ներկայացրել:

Ամենեւին էլ հակված չենք մտածելու, թե պետական մեղադրողների կամ դատավորի համեստությունն է պատճառը, որ ամբաստանյալ Բլեյանին իրավունք է տվել անկաշկանդ անիծելու նրանց «պիղծ» ծնունդը եւ իրականացրած «գավառական արդարադատությունը»: Համազգեստավորները հազիվ թե այդման զսպվածություն դրսեւորեին, եթե համոզված լինեին

մեղադրանքների անթերի լինելու հարցում: Բայց չէ՞ որ գլխիկոր նստելով, համառությամբ իրենն անելը նույնպես արդարադատություն իրականացնել չէ: Դրանով, հանձին Բլեյանի, նրանք կերտեցին մեկուսարանի «բնակիչների» կյանքով մտահոգ իրավապաշտպանի, որն իրեն այցելած նախկին արտգործնախարարին հաճելիորեն զարմացնում է ճաղատաս վանդակի գոյությամբ, քաղաքական պատվերով իրականացվող դատավարությունով...

Բլեյանի համախոհը չենք եւ ճաղատաս վանդակների ու պատվիրված դատավարությունների վերաբերյալ մեր զարմանքն արտահայտել ենք 1995 թ.-ին: Այդ իսկ պատճառով, արդարության դեմ չմեղանչելու համար, դարձյալ մնում ենք մեր կարծիքին՝ ավելի արժանապատիվ է թերի քննությունից հրաժարվելը, քան Ա. Բլեյանի վիրավորանքներին չդիմանալով, դռնփակ դատական նիստերով գործն ավարտին հասցնելը: Մանավանդ ամբաստանվողն ինքն է հայտարարում, որ հոգնել չունի, ինքն ավելի համառ է՝ «էնման եմ վիճաբանելու, մինչեւ ամոթ ունենաք՝ հրաժարվեք մեղադրանքից»:

Ս. Պ.

ՍԻՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ հայրապետի

Սիրիայի վրայով եգիպտոս եւ ապա Եթովպիա մեկնելու նախօրեին Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսը երեկ եղավ Հայաստանում Սիրիայի դեսպանատանը, որտեղ Սիրիայի դեսպանորդ դոկտ. Համեդ Հասանը ճաշկերույթ էր կազմակերպել ի պատիվ Վեհափառ հայրապետի: Ճաշկերույթը, ինչպես ասաց դեսպանորդը, Ամենայն հայոց հայրապետին ուղղված երախտագիտության արտահայտություն էր վասն այն բանի, որ Վեհափառ հայրապետը երկուշաբթի օրը իր բարձր հովանավորությունն էր տարածել Երեւանում արաբ ժողովրդին նվիրած երախտիքի հուշարձանի բացման հանդիսությանը: Դոկտ. Համեդ Հասանը անձամբ իր եւ դեսպանության համար պատիվ համարեց Վեհափառին հյուրընկալելը եւ խնդրեց օրհնել դեսպանատունը...

Պատասխան խոսքում Ամենայն հայոց հայրապետը բարեմաղթեց հայ եւ արաբ ժողովուրդների եւ ի մասնավորի հայ եւ սիրիացի ժողովուրդների միջեւ եղբայրական կապերի հետագա զարգացում եւ հզորացում:

Ամենայն հայոց հայրապետի պատվին տրված ճաշկերույթին ներկա էին նաեւ, բացի եկեղեցական հայրերից, բազմաթիվ հյուրեր՝ ի մասնավորի Եգիպտոսի եւ Լիբանանի դեսպանները, Ազգային ակադեմիայի նախագահը, ՀՀ արտգործնախարարության պատասխանատուներ, Սիրիայում ՀՀ դեսպանը եւ Հալեպում հյուպատոսը, ՀԲԸ Միության նախագահը, ՀՈԱԿ ատենապետը, Սիրիայից ժամանած հայկական պատվիրակության անդամները, ակադեմականներ, դասախոսներ, արվեստագետներ:

Մոտ մեկ ամիս Հայաստան հեղուկ գազ չի ներկրվում

Պատճառներն անհայտ են

ԵՐԵՎԱՆ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ-Մոտ մեկ ամիս է, ինչ Հայաստանի բնակչությանը հեղուկ գազ մատակարարող ձեռնարկություններից շատերում վերջացել են այդ համեմատաբար մաքրելի վառելիքի պաշարները: «Երեւանգազ» ձեռնարկությունից եւ հեղուկ գազի լիցքավորման տարբեր ծառայություններից «Նոյյան տապան»-ի թղթակցին հաջողվեց տեղեկանալ, որ հեղուկ գազ վերջին ժամանակահատվածում Հայաստան չի ներկրվել, սակայն պատճառների մասին ոչ մի աղբյուր տեղեկություններ չհաղորդեց:

Ինչպես հայտնի է, մինչ այժմ հեղուկ գազ Հայաստան էր առաքվում տարբեր երկրներից, այդ թվում Թուրքմենստանից, Ռուսաստանից եւ Իրանից: Հայտնի դարձավ նաեւ, որ մինչ վերջերս մասնավոր ձեռնարկությունների հետ մեկտեղ Հայաստան հեղուկ գազ էր առաքում նաեւ «Հայռուսգազարդը», որն այժմ դադարել է զբաղվել այդ գործունեությամբ: Ըստ որոշ, դեռեւս չճշտված տեղեկությունների, հեղուկ գազի ներքին շուկայից անհետանալու պատճառն այն է, որ Հայաստանում գործող որոշակի շրջանակներ ցանկանում են հաստատել իրենց մենաշնորհն այդ ոլորտում:

Արմենտելը եւ Դիեգո-Գարսիա կղզու սեխ-էրոտիկ ծառայությունները

Սկիզբը էջ 1

Այնուհետեւ փորձել է պարզել, թե 100 բնակիչներից կամ ամերիկյան զինծառայողներից ո՞ր մեկի հետ է ինքը շատ հեռախոսազրույցի կարիք զգացել ս. թ. մայիսի 30-ին, գիշերվա ժամը 2:40-ին: Արմենտելից պատասխանել են, որ կղզու նշված կոդի նշված հեռախոսահամարը մատուցում է... հեռախոսային սեխ-էրոտիկ ծառայություններ: Բարեբախտաբար Լեոնիդ Վարդանյանին հաջողվել է ապացուցել, որ նման հեռախոսակապ հնարավոր չէ, սակայն Արմենտելը, պարզվում է, հետաքրքրվողներից չէ: Ընկերությունը սեխ-էրոտիկ կապի ողջ պատասխանատվությունը գցում է Վարդանյանների ընտանիքի համակարգչի վրա, որն, ինքնիշխանորեն, նրանք գնել էին մայիսի 30-ից հետո՝ հունիսի 12-ին: Այդ մասին իմանալուց հետո Արմենտելը որոշեց ստուգել համակարգիչը վաճառած ընկերության ունեցած տեղեկատվությունը: Սակայն ոչ համակարգիչը ստուգվեց, ոչ վաճառող ընկերությունը, ոչ էլ հարցում արվեց ինտերնետային աղահովող ընկերություններին, այլ պարզապես տեղեկացվեց, որ նրանց «սիստեմային ստուգումները» (հավանաբար օժտված վերին ճշմարտությանը բնորոշ խիստ ճշգրիտ հատկանիշներով), այնուամենայնիվ, ապացուցում են կապը (կարելի էր ավելացնել՝ «հանցավոր») արդեն հարաճուն Դիեգո-Գարսիա կղզու հետ:

Լեոնիդ Վարդանյանն այս մանրամասնությունները երեկ ներկայացրեց լրագրողներին եւ պատասխանելով նրանց հարցերին ավելացրեց, որ բացառվում է նաեւ իր որդու եւ աղջկա նման հեռախոսակապից օգտվելը, ֆանգի առաջինը գիշերային պահակ է եւ ժամը 2:40-ին լինում է իր աշխատավայրում, իսկ երկրորդը համակարգչից օգտվել չգիտի: Նրա բազմաթիվ բողոքներին ի պատասխան Արմենտելի պաշտոնյաները խիստ վիրավորվել են եւ ընկերության 8 հազար աշխատակիցների անունից հանդիմանել Լեոնիդ Վարդանյանին: Բայց վերջինս չի վհատվել եւ շարունակում է իր բողոքարկումը: Նա մտադիր է Արմենտելի առաջարկած «որակյալ» կապի եւ «բարձր» պրոֆեսիոնալիզմի հետեւանքով իրեն հասցրած նյութական եւ բարոյական պատասխանատվության համար «դիմել մինչեւ ՄԱԿ»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ. 562863, AT&T (3742) 151065
e-mail: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Հանձնաժողովի աշխատանքի առնչությամբ, նախարարին մեջբերելով, նշենք, որ թեպետ ընդգրկված են մի շարք նախարարություններ, սակայն հիմնական հոգսն ու ծանրությունը, այնուամենայնիվ, գյուղատնտեսությանն է. այդ իսկ պատճառով հիմնական աշխատանքն իրականացնում է գյուղնախարարությունը: Առաջնային խնդիրն է, որ երաշտից հետո Հայաստանին խոստացված

Վնասի ճշգրիտ չափերի վերաբերյալ բազմիցս արված հարցադրումը մեկ անգամ ևս ուղղվեց գյուղնախարարին. այնուամենայնիվ, որքա՞ն է կազմում վնասը (եթե հավատանք ՄԱԿ-ի ներկայացրած հաշվետվությանը, վնասը հասնում է 60 մլն դոլարի): Զ. Գևորգյանը հակված էր հավատալու մեկ այլ տվյալի՝ շուրջ 40 մլն դոլար. թեպետ հերթական անգամ նշեց, որ թվերը նման իրավիճակներում չափա-

Շարունակելով եւ հիմնավորելով իր միտքը՝ Զավեն Գեւորգյանը նշեց, որ երաշտից մեծապես տուժել են հանրապետության հատկապես լեռնային շրջանները, առաջին հերթին Գեղարքունիքի մարզը. «Փաստորեն, տուժել են հենց այն շրջանները, որոնք առանց այդ էլ տնտեսական ծանր վիճակում էին գոյատեւում», ասաց նա: Նման իրավիճակում լիովին հասկանալի են բնակչության դժգոհությունները. «Որպեսզի

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Մարդասիրական օգնության պարտքն էլ գնալու երաշտից տուժած շրջաններն են»

Հավաստիացնում է գյուղնախարար Զավեն Գեւորգյանը

Երաշտի թեմային որքան էլ անդրադառնանք. ասելիք. միեւնույն է. կմնա. քանի դեռ վերացված չեն աղետի հետեւանքները: Տեղեկանալով. որ երաշտի հարցերով զբաղվող կառավարական հանձնաժողովը հերթական նիստն է գումարել. մի քանի լրատվամիջոցներ դիմեցին գյուղնախարար Զավեն Գեւորգյանին՝ պարզելու. թե ինչպես են ընթանում աշխատանքները:

մարդասիրական օգնությունը ճիշտ ժամանակին տեղ հասնի: Խոստումների մի մասն արդեն իսկ կատարված է. մյուսների չափի ու ժամկետի վերաբերյալ գյուղնախարարությունը ներկայումս բանակցում է ինչ-ինչ պարտավորություններ հանձն առած երկրների ու կազմակերպությունների հետ: Ստացված եւ սպասվող մարդասիրական օգնության պատկերն այժմ այսպիսին է. Մ. Նահանգները երաշտից տուժած 3 մարզերին ուղարկել է աշնանացանի սերմ, Ֆրանսիան եւ Հունաստանն իրենց օգնությունն առաքել են այլուրի եւ հացահատիկի տեսքով՝ համապատասխանաբար 6 եւ 10 հազ. տոննա, օգնություն ցուցաբերելու որոշ երաշխիքներ է տվել Ռուսաստանը, 5 մլն դոլարի աջակցություն է սպասվում Համաշխարհային բանկից, իսկ ամերիկյան կառավարությունն, ըստ հավատի տեղեկությունների, ընդարկում է Հայաստանին 30 հազ. տոննա անասնակերով օգնելու հարցը: Սակայն, ինչպես **«Ազգի»** հարցադրմանը պատասխանեց գյուղնախարարը, եթե անգամ խոստացված օգնությունը տեղ հասնի, միեւնույն է, երաշտի պատճառած վնասի 30-40 տոկոսն է լոկ վերացվելու:

զանց հարաբերական են, անհնար է ճշգրիտ որոշել վնասի չափը: Ինչ վերաբերում է մարդասիրական օգնությանն առհասարակ, ապա նախարարն ասաց. «Հայաստանն ամեն տարի էլ ստանում է իրեն հասանելիք օգնությունը, պարզապես այս տարի՝ հանգամանքները հաշվի առնելով, օգնությունը կառավի նախ եւ առաջ երաշտից տուժած շրջաններ»:

դժգոհությունն ավելի չուժգնանա եւ չկանգնենք բնակչության արտագաղթի, սպառնալիքի առջեւ, պիտի հնարավորինս մեղմենք վնասի հետեւանքները», շարունակում է Զ. Գեւորգյանը:

Նրա կարծիքով՝ երաշտի հետեւանքներն ամենածանր անդրադարձն են թողել հատկապես անասնաբուծության ոլորտում: Պատկերն ավելի ակնառու կդառնա փոքր-ինչ ավելի ուշ, երբ գյուղացին, անասնակերի պաշարների բացակայության պատճառով, կկանգնի անասունները մորթելու անհրաժեշտության առջեւ: «Եթե նման քայլ արվի, այս տարի մսի պակասություն չենք զգա, եւ սակագինը չի բարձրանա, բայց, փոխարենը, հետեւանքները կզգանք հաջորդ 5 տարվա ընթացքում, երբ մսի ու կաթնամթերքի սուր պակասություն ունենանք», հեռատեսորեն մտավախություն է հայտնում Զ. Գեւորգյանը: Եվ ավելացնում, որ նախարարությունն արդեն իսկ բանակցություններ է վարում մարդասիրական օգնություն խոստացած երկրների հետ՝ նպատակ ունենալով օժանդակության մի մասը ստանալ անասնակերի տեսքով:

ԱՆՈՒՇ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

«Ես գիտէի, որ անհատս մենակ մնալու չէի»

Այսպէս կասէր Գաղտնի բանակի հիմնադիր Գուրգէն Յանիկեանը

Օրերս Սարդարապատում Հայաստանի ազգագրության եւ ազգային-ազատագրական պայքարի պատմության թանգարանում Սարդարապատի հերոսամարտին նվիրված ցուցադրության տրամաբանական շարունակությունը դարձավ Հայկական ժողովրդային շարժման (ՀԺՇ) պատմությանը նվիրված ցուցահանդեսը:

Միջոցառումը նվիրված էր զինյալ ազատագրական պայքարի 38 նահատակ մարտիկներին, որոնք իրենց հերոսական պայքարը սկսել են դեռ 1973

թ. հունվարի 27-ից: Պայքարի սկզբնավորողը Գուրգեն Յանիկյան անվամբ ծերունին էր, որը հանուն իր ժողովրդի, դիմելով այդ քայլին (սպանել է 2 թուրք հյուպատոսների), հայկական հարցի լուծման ճանապարհի նոր ծեւ էր տեսնում: Յանիկյանի շուրջը հավաքվեցին մարտիկներ, որոնք դեռ նոր էին կյանք մտնելու: Դարձան ԱՍՍԱԼԱ-ի մարտիկներ, ընտրեցին «Վասն հայութեան, վասն հայրենեաց» նշանաբանը, իրենց արյունը թափեցին այն 352 գործողությունների ժամանակ, որոնցից յուրաքանչյուրը մի հերոսական պատմության բնութագիր է: Յուրաքանչյուր գործողություն իրականացվել եւ յուրաքանչյուր մարտիրոս պայքարել է հանուն Արեւմտյան Հայաստանի ազատագրության եւ միլիոնավոր զոհերի թափված արյան հատուցման:

Սակայն այսօր Հայաստանում «մեծ» աշխատանքով ծանրաբեռնված այրերը չեն էլ ցանկանում հիշել, որ աշխարհում Գ. Յանիկյան անունով ինչ-որ մեկն է եղել: Մենք՝ երիտասարդներս, պետք է ուղղենք այդ սխալը: Ինչո՞ւ պետք է հիշենք Ղարաբաղի, Շուշիի, Սարդարապատի հերոսներին եւ չհիշենք նույն հայրենիքի համար պայքարած Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱՀԳԲ) մարտիկներին: Եթե մոռանանք յուրաքանչյուր դպրոցականի կամ էլ անգամ չափահաս երիտասարդի եւ հարցնենք ՀԱՀԳ բանակի մասին... համոզված եմ, լռության ականատես կլինենք... Ուստի այս ցուցահանդեսն ունի նաեւ դաստիարակչական բնույթ: ՀԺՇ Հայաստանի ներկայացուցչությունն ա-

նում է ամեն ինչ, որ նման միջոցառումները դառնան ավանդական, նշեց կազմակերպության կազմակերպիչ Վազգեն Պետրոսյանը: Ցուցահանդեսը կազմակերպելիս աջակցել են թանգարանի աշխատակիցներ Թեւոս Ստեփանյանը, Սեդա Մելիքյանը եւ «Ուսանող» թերթի խմբագիր Արմինե Նահապետյանը:

Ցուցահանդեսը ներկայացնում էր ՀԱՀԳԲ-ի ծրագիրը, գրքերը, քարտեզները, առաջարկները, պահանջները, նամակները, հայտարարությունները եւ, իհարկե, 38 մարտիկների նկարները...

Բացման խոսքով հանդես եկավ ՀԺՇ Հայաստանի գրասենյակից Տիգրան Փաշապեյանը, այնուհետեւ խոսքը տրվեց նահատակ եղիա Քեչիշյանի հորը՝ Արտաշես Քեչիշյանին, դերասանուհի Աննա Պետրոսյանին:

...Թուրքերը ցանկացան ջնջել Հայաստանը, բայց մնացել է մի փոքր արյուն, որը շատ թանկ արյուն է: Ուրեմն եկեք անմնացորդ սիրով ու փառքով նվիրվենք եւ պահպանենք այդ արյունը:

ՆԱԲԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԱՎ Է ՈՒՇ, ՔԱՆ ԵՐԲԵՔ

Լոռու մարզում «Հայփոստի» երկու բաժանմունք եւս ունեցան շենքային պայմաններ

Հոկտեմբերի 11-ին, փոստային կապի աշխատողի միջազգային օրվա հարդ օրը բացվեց «Հայփոստ» ՓԲԸ-ի «Լոռու փոստատուն» դուստր ՓԲԸ-ի Վանաձորի թիվ 21 բաժանմունքի նոր շինությունը: Երկրաշարժից հետո բաժանմունքը գործել է տնակում: Տարոն-1 թաղամասի բնակելի առաջին հարկում տարածքը ծեռք է բերվել եւ վերանորոգվել «Հայփոստի» միջոցներով: Բացմանը մասնակցում էին Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Վանաձորի փոխքաղաքապետ Նորիկ Սարդարյանը, «Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Սպարտակ Ասոյանը, «Լոռու փոստատուն» դուստր ՓԲԸ-ի տնօրեն Վահրամ Հարությունյանը, փոխտնօրեն Էդիկ Խալաթյանը եւ ուրիշներ: Հարմարավետ եւ լավ կահավորված բաժանմունքն ունի նաեւ համակարգիչ:

Նույն օրը մարզի Դեբեդ գյուղում բացվեց փոստային բաժանմունքի տուֆակառույց շենքը, որը եւս կառուցվել է «Հայփոստի» միջոցներով (աջակցել է նաեւ գյուղապետարանը): Բաժանմունքը մինչ այժմ գործում էր տնակում: Գյուղապետ Կամո Պետրոսյանից տեղեկացանք, որ փոստային բաժանմունքի շենքը միակ նորակառույցն է վերջին տասը տարում (դպրոցը գործում է քարաշեն շենքում): Որքան էլ զարմանալի թվա, գյուղի բնակչությունը վերջին տարիներին աճել է: Եթե մի քանի տարի առաջ 280 տնտեսություն ունեցող Դեբեդի դպրոցում սովորում էր 97 աշակերտ, ապա այսօր շուրջ 150: Դպրոցը կարիք ունի օտար լեզվի եւ պատմության դասատուների, որոնց համար գյուղապետարանը պատրաստ է ստեղծել բոլոր պայմանները՝ ապահովել բնակվելու տեղով, վառելափայտով, սննդամթերքով: Սակայն առայժմ ցանկացողներ չկան:

ՄԻՆՎԱԼ ՄԻԿՈՅԱՆ

ԱՄՆ-ն անտարբերությամբ է վերաբերվում հակամայլերի մասին թուրքերի հայտարարություններին

Սկիզբը էջ 1

Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակները լաջ գիտեն, որ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում Հայոց ցեղասպանության հարցի բարձրացումը սեփական նախաձեռնությամբ Հայաստանի ուժերից վեր է: Այդ առումով խիստ սահմանափակ են նաեւ ամերիկյան հայկական լոբբիի կարողություններ: Ի վերջո, թիվ 398 բանաձեւն իր տեսակի մեջ առաջինը չէ, որ մտնում է Ներկայացուցիչների պալատի օրակարգ: Մերժվելու դեպքում, ոչ էլ վերջինն է լինելու: Ըստ երեւույթին այս հանգամանքը խիստ զայրացնում է թուրքերին: Նրանք, չունենալով ԱՄՆ-ի վրա ազդելու որեւէ լուրջ լծակ, իրենց ողջ զայրույթը հայերի եւ Հայաստանի վրա են թափում: Այս պայմաններում հոխորտանքը նրանց համար դառնում է հակազդեցության միջոց: Քանի որ ԱՄՆ-ը արհամարհանքի հասնող անտարբերությամբ է վերաբերվում թուրքական հոխորտանքներին, ուստի դրանք բլեֆի երանգ են ստանում: արդյունքում Թուրքիան չի կարողանում խուսափել դեմարշից:

Այս առումով, հատկանշական էր Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի սեպտեմբերի 29-ի նիստը, որտեղ ընդունվեց «Հակազդեցության ծրագիրը»: Դրա ընդունումը առիթ տվեց թուրքական թերթերին աղաղակելու, թե Թուրքիան պատրաստվում է արմատապես վերանայել ԱՄՆ-ի հետ իր հարաբերությունները, դիմելով նրա դեմ մի շարք պատժամիջոցների: «Հյուրիեթը» հոկտեմբերի 5-ի համարում շտապեց հայտարարել Ինջիռլիքի ռազմաբազան փակելու; Բաղդադում դեսպան նշանակելու, մարդասիրական օգնությամբ բեռնված ինքնաթիռ Իրաք ուղարկելու եւ թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետի այցը Վաշինգտոն հետաձգելու Թուրքիայի պատրաստակամության մասին:

Այս միջոցառումներից թերեւս կարելի էր Ինջիռլիքի ռազմաբազայի փակումը պատժամիջոց համարել: Սակայն շուտով պարզվեց, որ խոսքը ոչ թե ռազմաբազան փակելու, այլ բազայում տեղակայված ամերիկյան ինքնաթիռների հետախուզական թռիչքները Հյուսիսային Իրաքում սահմանափակելու մասին է: Հատկանշական է, որ դա նույնպես մոռացության տրվեց, փոխարենը մամուլում առաջ քաշվեց Իրաքի հետ Հաբուրի կողքին երկրորդ սահմանադուռը բացելու հարցը: Դրան հետեւեց Քերքուք-Յումուրթալըք նավթամուղի վերաշահագործման հայտարարությունը, ինչն իր արտահայտությունը գտավ «Թուրքիյե» օրաթերթի հոկտեմբերի 11-ի համարում: Ի դեպ, եթե սահմանային դռան բացումը հերքվեց Թուրքիայի արտգործնախարարության կողմից, ապա վերոհիշյալ նավթամուղի վերաշահագործման հավանականությունն էլ հենց հոկտեմբերի 11-ին հեռուստատեսությամբ կասկածի տակ դրեց Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի դոկտ. Հասան Քոնին: Ավելին, նա նշեց, որ Քերքուք-Յումուրթալըք նավթամուղի հարցը չի քննարկվել, դրա վերաշահագործմանն առնչվող հայտարարությունները, ըստ երեւույթին, բլեֆ են:

Մասնանշված միջոցառումներից Թուրքիային ընդամենը հաջողվեց հետաձգել գլխավոր շտաբի պետի այցը եւ մարդասիրական առաքելությամբ մի ինքնաթիռ ուղարկել Իրաք: Եթե սրանք հակամայլ են համարվում, ապա բլեֆը ո՞րն է: Այս հարցին պետք է թուրքերն իրենք պատասխանեն: Խնդիրը, սակայն պատասխանը չէ, այլ բլեֆի հետ պայմանավորված դեմարշը:

ԱԶԳ

ԻՐԱՎԻՃԱԿ

Եկս մի էժան ֆարսի մասին

Սփյուռքահայ ներդնողներից Հայաստանում գումարներ են փորձում կորզել բոլորը, այժմ էլ՝ դատարանի միջոցով

Այսօր արդեն միջազգային մակարդակով խոսվում է Հայաստանում իշխանական ոլորտի կոռումպացվածության մասին, որը վարկաբեկում է մեր երկիրը աշխարհի աչքում, իսկ ներսում ստեղծում է ադրելու եւ աշխատելու համար անհանդուրժելի մթնոլորտ: Մեր դժբախտությունների մեծ մասը հենց այս իշխանական ոլորտներում կամայականությունների, շահադիտական մոտեցումների, ընչաքաղցության եւ օրենքների բացահայտ ու լկտի շրջանցման հետեւանք է: Դա կասկած չի հարուցում, սակայն այդ սանձարձակ փողոտությունը, չնայած մի քանի վերին օղակների ակտիվացող ջանքերին, այսօր էլ անարգել ու անպատիժ շարունակվում է, երկրում հաստատելով իշխանական ճգնաժամի, անիշխանության եւ անօրինության մթնոլորտ:

Իշխանության ճյուղերից մեկը դատական իշխանությունն է: Հենց այս իշխանությունն է կոչված իրականացնելու արդարադատությունը, սակայն բոլորին է հայտնի, որ հենց այս ոլորտում կատարվում են մեծաքանակ իրավախախտումներ: Եվ սա վերածվել է ամենաանպատիժ ոլորտի, քանի որ կոչված լինելով ապահովելու արդարադատության իրավակազմը, ինքը դուրս է մնացել ամեն տեսակի հսկողությունից: Օրենքով նախատեսվում է ապօրինի դատավճիռ արձակելու համար դատավորը ենթակա է քրեական պատասխանատվության: Բոլորին է հայտնի, որ մեր դատական համակարգում, մեղմ ասած, բոլորը միայն հրեշակներ չեն, եւ այնտեղ եւս խախտումներ կատարվում են:

Սակայն օրենքի խախտման համար մեր հանրապետությունում առ այսօր դատախազությունը որեւէ գործ չի հարուցել ակնհայտ ապօրինի վճիռների համար: Որովհետեւ, ինչպես ասում են, թուրն էլ է իրենց ձեռքին, զոհի ճակատագիրն էլ: Անպատիժ շարունակվում են կամայականություններն այս ոլորտում, (որոնց լավագույն դեպքում անդրադառնում է մամուլը), երբեւիցե չստանալով իրենց իրավական հակազդեցությունը: Դրանց թիվը այս պատճառով գնալով բազմապատկվում է, կուտակվում, եւ հեռու չէ այն օրը, երբ դատական այդ խախտումների հարցերը կտեղափոխվեն արդեն եվրոդատարան, իսկ այժմ, ամենաթողության պայմաններում, դրանք ավելի ու ավելի արտառոց են դառնում:

Այսօր ուզում ենք խոսել այդպիսի մի օրինակի մասին, որտեղ, ելնելով նյութապաշտական մղումներից, ընդամենը մի քանի հազար դոլարի տիրանալու համար շրջանցում են օրենքի միանգամից մի քանի կետեր, եւ որ շատ ավելի կարեւոր է՝ ոտնահարում են դրա հայրենադարձիկը ներդնելու համար Հայաստան եկած սփյուռքահայ գործարարների շահերը, վիրավորում նրանց ինքնասիրությունը եւ հիասթափեցնում մեր երկրից: 1998 թ. հոկտեմբերի 1-ին տարածի անհատույց օգտագործման վերաբերյալ պայմանագիր է կնքվում Քըրք Քըրքորյանի խոսուն անունը կրող տնտեսահրավագիտական ինստիտուտի եւ Արտասահմանյան ներդնողների համագումար հասարակական կազմակերպության միջեւ՝ մեկ տարի ժամկետով: Ըստ պայմանագրի ինստիտուտը, որի ռեկտորը նույն Արտասահմանյան ներդնողների համագումարի պատվավոր անդամ էր, համագումարի խորհրդի ներկայացուցիչ, անհատույց օգտագործման է հանձնում սեփականության կարգով իրեն պատկանող շենքից 200 քմ տարածք:

Պայմանագիրը կնքված է մեկ տարի ժամկետով, ուժի մեջ է մտնում ստորագրման պահից եւ գործում է մինչեւ 01.10.1999 թ.:

Պայմանագիրը ստորագրելուց 6 ամիս անց՝ 25.03.99 թ. ինստիտուտը թիվ 21351 գրությամբ տեղյակ է պահում Արտասահմանյան ներդնողների համագումարին, որ ազատեն տարածքը, նամակի մեջ նշելով «Նախորդ խնդրում ենք չնեղանալ եւ ազատել Ձեր զբաղեցրած տարածքը»: Համագումարը մտածելով, որ ինստիտուտը գուցե վարձավճարի պատճառով է «փոփանել», իրենք էլ տեղափոխվելու եւ հաստատվելու համար ծախսեր են կատարել եւ նոպատակահարմար չէ նախատեսված ժամկետը չլրացած նոր տեղափոխություն կազմակերպել, որոշում են վարձակալական պայմանագրի տեքստ պատրաստել, ինչը կնքված բլանկի վրա ներկայացվում է ինստիտուտի ռեկտորին, որպեսզի փոխադարձ համաձայնության գալու դեպքում ստորագրեն պայմանագիրը, անցնելով սույն տարածքի վարձակալությամբ օգտագործման: Սակայն ինստիտուտը չի համաձայնվում վարձակալության առաջարկին, իսկ որոշ ժամանակ անց, ի զարմանս համագումարի, ինստիտուտը դիմում է ճնշման միջոցների, ոստիկանություն է ուղարկում, որոնք պահանջում են վարձավճար մուծել ինստիտուտին: Ճիշտ է, վերջիններս տեսնելով անհատույց օգտագործման պայմանագիրը, համոզվում եւ հեռանում են, սակայն այստեղ իսկ արդեն զգացվում է Հայաստանում օրենքների ոտնահարման փաստը, քանի որ ոստիկանությունը առանց դատարանի որոշման, սեփական նախաձեռնությամբ կամ «ծանոթության կարգով» իրավունք չունի խառնվելու քաղաքացիների իրավական հարաբերություններին: Ի՞նչ է կատարվում իրականում. ձեռքի տակ ստանալով վարձակալության մասին համագումարի նախագիծ-առաջարկը, այն էլ՝ կնքված թղթի վրա, ինստիտուտը որոշում է դա ներկայացնել որպես փաստաթուղթ համագումարից շորթումներ կատարելու համար, թույլ տալով բազմաթիվ անխուսափելի կեղծիքներ եւ անտրամաբանական զուգորդումներ: Այսպես, ձեւակերպվում է, իբրեւ թե այս «պայմանագիրը» հոկտեմբերի 1-ին է կնքվել, որպեսզի կարողանա նախորդ բոլոր ամիսների համար փող գանձել: Սակայն դուրս է գալիս, որ հոկտեմբերի 1-ին կազմակերպությունների միջեւ կնքվել է երկու պայմանագիր, մեկը անհատույց օգտագործման (օրինականը եւ չվիճարկվողը), մյուսը վարձակալության (հետին թվով սարքված եւ դատարանում վիճարկվողը), ինչը բացառում է անտրամաբանական է: Հաղթող սարքված այս գրությունում նման արտառոց անհամապատասխանություններ էլի կան, օրինակ՝ Համագումարի կողմից ներկայացված նախագծի 5.1 կետում արձանագրված էր. «Պայմանագիրը կնքված է մեկ տարի ժամկետով, ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից եւ գործում է մինչեւ...»: Ռեկտորը, իրեն հարմարեցնելով, ավելացրել է իրեն հարմար թիվը (վեճի ծագման օրը). «4 ապրիլի 1999 թ.», բոլորովին անտեսելով, որ դա ոչ թե մեկ տարի, այլ 6 ամիս է կազմում: Ակնհայտ երեւում են միակողմանի կեղծիքի նշանները: Սակայն այս ամենը մի կողմ, այստեղ առկա է մի հանգամանք, որը երբեք շրջանցել հնարավոր չէ՝ դատարան ներկայացված փաստաթուղթը որեւէ գործարքի համար օրինական հիմք հանդիսանալ չի կարող, որովհետեւ այն ստորագրված չէ կողմերից մեկի՝ Արտասահմանյան ներդնողների՝ համագումարի ներկայացուցչի կողմից: Տվյալ պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 44 հոդվածը սահմանում է. «Գրավոր գործարքը պետք է ստորագրված լինի այն էլ կնքող անձանց կողմից»: Եվ նույն օրենսգրքի 48 հոդվածը սահմանում է. «Օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է»: Պարզաբանման համար հիշեցնենք, որ իրավական փաստաթղթերում կնքիչը ընդամենը պատասխանատու անձի ստորագրությունը հաստատող միջոց է եւ, ինչպես հետեւում է օրենքից, առանց ստորագրության գործարքները անվավեր են:

Եվ ահա այսպիսի կեղծ, անվավեր եւ անօրինական փաստաթղթով ինստիտուտը մտնում է դատարան՝ Արտասահմանյան ներդնողների համագումար կազմակերպությունից գումարներ կորզելու նպատակով: Օրենքի հետ հակասություններն այնքան շատ են, որ նույնիսկ այս կեղծված թուղթը պայմանագիր համարելու դեպքում էլ դարձյալ գործարքը օրենքի ուժ ստանալ չի կարող: Փաստերի բացարձակ առկայության պայմաններում, այլեւս որեւէ սողանցք չթողնելու նպատակով պատասխանող կողմը հակընդդեմ հայցադիմում է ներկայացնում, ըստ որի, նույնիսկ ներկայացվող թղթերը ընդունելու պայմաններում էլ, անհնար է գործարքը իրական համարել: Այսպես, Անշարժ գույքի մասին օրենքի 13 հոդվածի համաձայն վարձակալության գրավոր պայմանագիրը ենթակա է պետական գրանցման եւ ուժի մեջ է մտնում միայն այդ գրանցումը կատարելուց հետո: Օրենքում նաեւ ուղղակի, աներկիմաստ ասվում է. «Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ կնքված վարձակալության պայմանագրերը համարվում են անվավեր»: Վերջինիս հիման վրա հակընդդեմ հայցով պահանջվել է անվավեր ճանաչել այդ տարօրինակ, ապօրինի «պայմանագիրը»:

Զգալով իր պահանջների, մեղմ ասած, անհամապատասխանությունը օրենքի տառի հետ եւ փաստարկների անտրամաբանականությունն ու աղքատությունը, ինստիտուտը փորձում է կողմնակի հանգամանքներ էլ «թխել» իր արտառոց հայցին ինչ-որ տրամաբանություն հաղորդելու համար: Այսպես, իբրեւ ապացույց ինստիտուտը ներկայացնում է մայիսին մուծված պատահական գումարով (500 դոլարի չափով) մի անդորրագիր, իբր դա համագումարն է մուծել, որպես վարձավճար: Սակայն անհասկանալի է արդեն ապրիլին տարածքը ազատած կազմակերպությունը ինչո՞ւ պիտի դրանից հետո վարձավճար մուծեր, այն էլ մի պատահական, ոչ մի պայմանավորվածության չհամապատասխանող գումար: Երբ դատաքննության ընթացքում պահանջվեց դրամարկղային գրքույկը, պարզվեց, որ այդ անդորրագիրը, որ ներկայացվել է դատարանին, մուծված է ինստիտուտի աշխատակցի կողմից, նույն անունով յուրահանչյուր ամիս շարունակաբար նման գումար մուծվել եւ դուրս է գրվել, պարզապես այս մեկի վրա, իրեց ձեռքով, վերեւից խցկված է, թե սա իբր մուտք է եղել համագումարի կողմից, այն դեպքում, երբ համագումարը, բացի էլեկտրականության եւ այլ կարգի ընթացիկ կոմունալ վճարներից, վարձավճարային որեւէ մուծում չի կատարել, քանի որ իր ձեռքին էր տարածքի անհատույց օգտագործման օրինական պայմանագիրը:

Եվ ամենաապշեցուցիչն այն է, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքի 1-ին ատյանի դատարանը հանձին նախագահ Ժորա Վարդանյանի, հենվելով այսպիսի հեղհեղուկ, կեղծված եւ օրենքի պահանջներին բազմաթիվ կետերով հակասող փաստարկների վրա, վճիռ է կայացնում Արտասահմանյան ներդնողների համագումարից բռնագանձել 3700 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ այդ ոչ մեծ գումարի համար մեղանչելով օրենքի եւ բարոյականության առջեւ, անտեսելով եւ մերժելով պատշաճանվող կողմերից ներկայացված բոլոր փաստերն ու հակընդդեմ հայցը: Անարդար վճիռը հիմնավորելու համար դատարանը իր վճռում բերում է գործին միանգամայն անկապ հղումներ, ինչպես. «Հայցվոր կողմը ինքնուրույն իրավաբանական անձ է, ունի իր սեփականությունը տնօրինելու իրավունք, որի անբաժանելի մասն է վարձակալության տալը», որ «գործարքը արգելված չէ օրենսդրությամբ» եւ այլն, ծիծաղելիորեն հաշիվ չտալով, որ դատական քննության առարկա է ոչ թե գույքի վարձակալության տալու իրավունքը, այլ վարձակալության փաստաթղթերի կեղծությունը եւ օրենքի ուժ չունենալը: Փաստորեն, դատարանը իր վճիռը արդարացնելու համար փաստարկներ չի ունեցել, դիմելով խուսափումների, իսկ իրականում կեղծ, անվավեր փաստաթուղթը ընդունել է հիմք եւ վճիռ կայացրել:

Այս գործում օրենքի հետ անհամապատասխանություններն այնքան ակնհայտ են, որ դրանք երբեւէ անտեսելն անհնար է, քանի որ փաստերը մնում են: Գործը բողոքարկված է ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարանին եւ բոլոր հիմքերը կան հուսալու, որ, չնայած մեր դատական ատյանների՝ մեկը մյուսի վրիպումները թաքցնելու՝ կոմունիստական ժամանակներից ժառանգած վատ սովորությանը, այնտեղ այնուամենայնիվ արդար վերաբերմունք կցուցաբերվի:

Քանի որ վերը ակնարկվեց, անդրադառնանք նաեւ այս երեւույթի բարոյաղաղական կողմին: Հենց այդ օրերին հանրապետության իշխանության ամենաբարձր ներկայացուցիչը՝ երկրի նախագահը ԱՄՆ-ում հանդիպում էր սփյուռքահայ գործարարների հետ եւ հրապարակայնորեն երաշխավոր հանդես գալիս հայրենիքում նրանց անկաշկանդ գործունեության համար: Իսկ նույն ժամանակ տեղում, նույնքան պետական իշխանությունը ներկայացնող 1-ին ատյանի դատարանը ընդամենը 3700 դոլար բռնագանձելու նպատակով դատական հետապնդում է իրականացնում 158 սփյուռքահայ գործարարների միավորող եւ միայն վերջին 2 ամսում Հայաստանում 2.700.000 ԱՄՆ դոլարի ներդրում նախապատրաստած ներկայացուցչական մարմնի դեմ՝ խուլ անտարբերությամբ արհամարհելով սեւով սպիտակի վրա գրված օրենքի ակնհայտ պահանջները, այսպիսով հայրենադարձիկ բարոյական եւ իրական վնաս պատճառելով իր երկրին: Այս է, որ մենք բնութագրում ենք որպես Հայաստանում իշխանության դեգրադացիա եւ ճգնաժամ: Այլապես սփյուռքահայ գործարարներին միավորող կազմակերպությանը, տարածքի անհատույց օգտագործման ամենաիսկական եւ չվիճարկվող փաստաթուղթը ձեռքին, դատարան քարշ չէին տա՝ այդ նույն տարածքի համար անօրինական փաստաթղթերի հիման վրա նրանից գումարներ կորզելու համար:

ՎԱՐԴԱՆ ԿՈՒՉԻԿՅԱՆ
ՀՀ նախագահ

ԳՅՈՒՄՐԻ

Զ. Հանքսմանը, Հ. Օյունջյանը եւ Ս. Բալյանը՝ պատվավոր քաղաքացիներ

Քաղաքի ավագանու որոշմամբ ամերիկաբնակ բարեգործներ Ջոն Հանքսմանին, Հովհաննես Օյունջյանին եւ Սիմոն՝ Եզնիկ Բալյանին շնորհվել է Գյումրու պատվավոր քաղաքացու կոչում: Որոշումը կայացվել է Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանի առաջարկությամբ, բարձր գնահատելով նշված անձանց մարդասիրական գործունեությունն ու մեծ ներդրումը Գյումրի քաղաքի վերականգնման գործում: Ամերիկացի գործարար Ջոն Հանքսմանն իր ընտանիքով ավելի երկրաշարժից ի վեր 18 մլն դոլարի բարեգործական օգնություն է տրամադրել Հայաստանին, Երեւանում կառուցել բեսոնե սալիկների եւ տանիքի կղմինդրի արտադրության գործարան: Նրա իրականացրած տասնյակ մարդասիրական ծրագրերից թերեւս ամենամեծը Գյումրիում 400 բնակարանով մի ամբողջ բնակելի թաղամասի կառուցումն է, որի առաջին օբյեկտը՝ հանրակրթական դպրոցի շենքը, հանդիսավոր շահագործման հանձնվեց հոկտեմբերի 5-ին: Նույն օրը շարք մտավ նաեւ քաղաքի 21-րդ միջնակարգ դպրոցի վերակառուցված շենքը, որը նյութապաշտական ազգային բարեգործ Հովհաննես Օյունջյանի առատաձեռն ֆինանսական նվիրատվության շնորհիվ ամբողջապես հիմնանորոգել ու կահավորել է Հայ օգնության ֆոնդը՝ անցկացնելով ջրագիծ ու գազամուղ, կառուցելով նոր կաթսայատուն, բարեկարգելով շրջակայքը: Օյունջյան կրթահամալիրը նաեւ հայրենիքի պետական պարգեւի՝ «Մխիթար Հերացի» մեդալի արժանացած բարեգործի Հայաստանի մատաղ սերնդի կրթությանն ուղղված երկարաժամկետ ծրագրի առաջին քայլն է, իսկ ծրագիրը նոր ձեռնարկումներով շարունակվելու է: Աղետի գոտու վերականգնման գործում ակնառու է նաեւ Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի ներդրումը, որի բոլոր իրագործումների կենտրոնում միշտ ներկա է նրա գործադիր տնօրեն Սիմոն-Եզնիկ Բալյանը:

Պատվավոր քաղաքացիության շնորհումը գյումրեցիների երախտագիտության մի արտահայտությունն է քաղաքին աջակցության ձեռք մեկնած բարեգործներին: Մնում է որեւէ փաստաթղթով մեկընդմիշտ հստակեցնել, թե այդ կոչումն ինչ իրավունքներ կամ արտոնություններ է տալու:

Կրթաթոշակներ քաղաքապետի կողմից

Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանը վերջերս 100-ական ԱՄՆ դոլարի չափով կրթաթոշակներ հանձնեց քաղաքի բուհերի եւ ուսումնարանների վճարովի համակարգի մի խումբ գերազանցիկ ուսանողների, որոնք նաեւ դժվարություններ ունեն ուսման վարձի վճարման հարցում: Ակնհայտ է, որ պետական համարվող այդ կրթական հաստատություններում այսօր ուսման վճարովիության զարմանալի գերակշռությունը երբեմն անհաղթահարելի խոչընդոտ է դարձել խոստումնալից, բայց անվճարունակ շատ երիտասարդների ճանապարհին՝ վտանգելով նրանց եւ վերջին հաշվով ողջ սերնդի ապագան: Այս պարագայում դժվար է գերագնահատել բարեգործական աջակցության նշանակությունը: Առավել ուրախալի է, երբ նման դրվատելի օրինակ է տալիս համայնքի ղեկավարը: Քաղաքապետի նախաձեռնությամբ անցյալ ուսարվա երկրորդ կիսամյակում ուսման վարձի հարցում ֆինանսական լրիվ կամ մասնակի աջակցություն էր ցույց տրվել 70 ուսանողի: Այս անգամ նրանց թիվը 22 է: Վ. Ղուկասյանը նաեւ քաղաքի գործարարներին կոչ է արել օգնել լավագույն ուսանողներին՝ այդպիսով ապահովելով վաղվա օրը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Վաշինգտոնի լուռ համաձայնությամբ վերջ է տրվում Իրաքի 10-ամյա շրջափակմանը

Կշահարկվի՞ արդյոք իրական խաղաքարտը

ՄԱԿ-ում Սաուդյան Արաբիայի դեսպանը հորդորել է Իրաքի դեմ բեռնարգելքների հանձնաժողովին վերջ տալ այդ երկրի նկատմամբ կիրառվող տասնամյա պատժամիջոցներին: Պաշտոնական Ռիադը ցանկություն է հայտնել վերաբացել սահմանային «Ջդեդադ Արար» դարպասը, որը ցամաքային ճանապարհով Սաուդյան Արաբիան կապում է Իրաքին, առաջին անհրաժեշտության Մեծ Բրիտանիայի օդուժը չի ռմբահարում Իրաքի տարածքը, ինչը եւս արտառոց է, եթե հաշվի առնենք, որ վերջին տարիներին չի եղել շաբաթ, որ ամերիկացիներն ու բրիտանացիները չռմբահարեն Իրաքը: Ամերիկյան հեղինակավոր թերթերը վերջին օրերին բացարձակապես չեն անդրադառնում Իրաքին, պետդեպարտամենտը չի դատապարտում Ռուսաստանի, Ֆրանսիայի, արաբական երկրների, Թուրքիայի Իրաք օդանավեր ուղարկելու փաստը, ինչը ՄԱԿ-ի ընդունած բանաձեւի անտեսում է:

Հատկապես ուշագրավ է Թուրքիայի պարագան: Հոկտեմբերի 9-ին Թուրքիայից Իրաք մեկնեց մարդասիրական օգնությամբ բեռնված առաջին ինքնաթիռը: Դիսորդների մեծ մասը Անկարայի քայլը մեկնաբանում է որպես հակահարված Վաշինգտոնին կազմված ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովում Հայոց ցեղասպանության մասին որոշում ընդունելու հետ: Մեր կարծիքով, խնդիրն ավելի խոր արմատներ ունի: Անկարան չէր արգելել իր օդային տարածքով Ֆրանսիայից Իրաք մեկնող օդանավի թռիչքը այն ժամանակ, երբ հայկական բանաձեւը չէր հաստատվել Ներկայացուցիչների պալատի միջազգային հարցերի հանձնաժողովում:

Անկարային առավել անհանգստացնում է այլ խնդիր, որն ավելի ցավոտ է, քան ցեղասպանության արձարձումը: Հուլիսի վերջերին Վաշինգտոնի հրավերով ԱՄՆ մեկնեցին Հյուսիսային Իրաքի երկու ղուրդ առաջնորդներ Մասուդ Բարզանին եւ Ջալալ Թալաբանին: Թե ինչի շուրջ է Վաշինգտոնը բանակցել Բարզանիի եւ Թալաբանիի հետ՝ հայտնի չէ: Դրան հաջորդեց պետքարտուղարության Թուրքիայի Դիարբեքիր քաղաքում ներկայացուցչություն բացելու մտադրության մասին տեղեկատվությունը: Հոկտեմբերի 6-ին-Անկարա ժամանեց եւ վարչապետ Բյուլենթ Էջեւիթին հանդիպեց Մասուդ Բարզանին: Վերջինս համարվում է թուրքական գործակալ եւ թուրք ոստիկանների հետ դաժան պայքար է մղել Քրդական աշխատավորական կուսակցության (PKK) մարտիկների դեմ: Էջեւիթ-Բարզանի հանդիպումից մանրամասներ չհաղորդվեցին:

Ըստ երեւույթին, Անկարային կրկին սկսել է տանջել իր համար ցավոտ քրդական հարցը: PKK-ի առաջնորդ Օջալանին ձերբակալելուց եւ բանտարկելուց հետո Թուրքիան շունչ քաշեց: Սակայն, կարծես ԱՄՆ-ն իր միջնարեւելյան քաղաքականության մեջ փոփոխություններ է անում: Հակառակ պարագայում, Իրաքի նկատմամբ Վաշինգտոնի դիրքորոշումն այլ կլիներ:

Քրդական հարցը սրի նման կախված է Թուրքիայի գլխավերեւում: Կշահարկվի՞ արդյոք այս հզոր խաղաքարտը՝ ժամանակը ցույց կտա: Սակայն մեկ բան ակնհայտ է. Միջին Արեւելքում տեղի են ունենում քաղաքական վերադասավորումներ:

Ռ. Հ.

ԱՄՆ-ի սայթաքուն քայլերը եւ արաբական գագաթաժողովը

Վաշինգտոնի միջնորդական ջանքերը, ըստ երեւույթին, ընկրկեցին պաղեստինա-իսրայելական առճակատումները կարգավորելու գործում, հատկապես հոկտեմբերի 4-5-ը Ֆրանսիայում եւ Եգիպտոսում ԱՄՆ ԱԳ նախարար Մադլեն Օլբրայթի կողմնակալ, ուստիեւ ձախողված փորձերից հետո: Դրա փոխարեն, հակամարտ կողմերի հետ աշխուժացան եվրամիության, Ռուսաստանի եւ ՄԱԿ-ի դիվանագիտական ջանքերը: Վաշինգտոնի նշյալ նահանջը կասեցնելու նպատակով ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնն ամեն գնով ձգտում է քառակողմ հանդիպում կազմակերպել իր, եգիպտոսի նախագահ Մուբարաքի, պաղեստինյան առաջնորդ Արաֆաթի եւ Իսրայելի վարչապետ Բարաքի միջեւ: Սակայն, Մուբարաքի եւ Արաֆաթի բացասական արձագանքի պատճառով, առայժմ սայթաքում է Քլինթոնի այդ նախաձեռնությունը, որն, անկասկած, ուղղվելու է վարկաբեկված Բարաքի դրությունը փրկելուն:

Սակայն թե ինչու հոկտեմբերի 10-ին Դամասկոսում գտնվող եգիպտոսի ԱԳ նախարար Ամր Մուսան բացառեց մոտ ապագայում այդ քառակողմ հանդիպման անցկացումը, շեշտելով, որ առաջնությունը հիմա արաբական գագաթաժողովինն է, որը կայանալու է հոկտեմբերի 21-22-ին, Կահիրեում: Հաշվի առնելով առայժմ եղած արաբական մայրաքաղաքների պատասխանները եւ ժողովրդական կարծր կեցվածքը Թել Ավիվի ագրեսիայի, սպառնալիքների ու վերջնագրերի հանդեպ, ենթադրվում է, որ նրանք ծանրակշիռ որոշումներ են որդեգրելու գագաթաժողովում: Այդ իսկ պատճառով ամերիկյան նախաձեռնությունը կարող է նաեւ կանխարգելիչ դեր ունենալ եւ նախօրոք լիցքաթափել համաարաբական վճռականությունը: Հետեւաբար, կարելի է ենթադրել, որ մինչ գագաթաժողովը ժամանակը գործելու է հօգուտ պաղեստինյան ապստամբության եւ ի վնաս ամերիկա-իսրայելյան առանցքի:

Ա. Մ.

Յասեր Արաֆաթ. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անան. Ռուսաստանի արտգործնախարար Իգոր Իվանով:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

PKK-ի գործերը վատ են

Ֆրանսիական «Պուեն» շաբաթաթերթը տեղեկացնում, որ Քրդական աշխատավորական կուսակցությունը՝ PKK-ն, օրերս Իրաքի հյուսիսում կորցրել է իր վերջին հենակետերից մեկը: Թուրքական դաշտանի կողմից մահվան դատապարտված եւ այժմ Իմրալը կղզում պահվող PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի պահանջով թուրք ադյուտանտները վերջին մեկ տարում դադարեցրել են ռազմական գործողությունները եւ թողել Թուրքիայի տարածքը: Բայց թուրքական բանակը շարունակում է քրդերին հալածել Հյուսիսային Իրաքի կամ իրաքյան Քրդստանի լեռներում, հաճախ նույնիսկ չհաղորդելով այդ մասին: Այսպես, օգոստոսի կեսերին Իրաքի հյուսիսում թուրքական օդուժի ռմբակոծությունների հետեւանքով «թյուրիմացաբար» զոհվեցին մոտ 40 խաղաղ քրդեր:

Արդեն քանի տարի Իրաքի հյուսիսում գործող քրդական երկու խոշոր զինված կազմավորումներից մեկը՝ Մասուդ Բարզանիի քրդական ժողովրդավարական կուսակցությունը գործակցում է թուրքական իշխանությունների հետ եւ մշտապես հարձակումներ գործում PKK-ի վրա: Սեպտեմբերի կեսերից PKK-ի վրա հարձակումներ է սկսել նաեւ Քրդստանի հայրենասիրական միությունը՝ Ջալալ Թալաբանիի գլխավորությամբ: Հաղորդվում է, որ այդ հարձակումների հետեւանքով արդեն զոհվել են PKK-ի երկու տասնյակ մարտիկներ:

Պ. Ք.

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱ

Եվրամիությունը վերացրեց պատժամիջոցները

Կոշտունիցայի կրկնակի հաղթանակը

Հարավսլավիայի նորընտիր նախագահ Վոյսլավ Կոշտունիցան հոկտեմբերի 9-ին կրկնակի հաղթանակ տարավ՝ Բելգրադում լուծարվեց Սերբիայի խորհրդարանը, իսկ եվրամիությունը հանդես եկավ Հարավսլավիայի դեմ հաստատված պատժամիջոցները վերացնելու հայտարարությամբ: Հաջորդ օրը Բելգրադ կատարած այցի ժամանակ նախագահ Կոշտունիցային մանրամասնություններ հայտնեց եվրամիությունում ներկայումս նախագահող Ֆրանսիայի արտգործնախարար Յուբեր Վեդրինը:

Վերջին տարիներին ԵՄ-ը օգնում էր միայն Միլոշեւիչի վարչակարգի դեմ պայքարող ուժերին: Միությունը խոստացել էր օգնել Սերբիային, եթե այդ վարչակարգը տապալվի: Պատժամիջոցների վերացման հայտարարության մեջ նշվում է, որ ԵՄ այդ քայլի նպատակն է «նպաստել Հարավսլավիայում ժողովրդավարության վերահաստատմանը, քաղաքական, տնտեսական, սոցիալական բարեփոխումների իրականացմանը եւ եվրամիության հետ Բելգրադի մերձեցմանը»: ԵՄ պատժամիջոցների վերացումը որեւէ կապ չունի 1998 թ. Բելգրադի դեմ ՄԱԿ-ի հաստատած զինավաճառքի արգելքի կամ Միլոշեւիչի եւ իր մերձավորների քրեական պատասխանատվության հետ: Այդ մասին նշվեց Լյուքսեմբուրգում երկուշաբթի կայացած ԵՄ նախարարների խորհրդի նիստում:

Վեդրինը նախագահ Կոշտունիցային հայտնեց, որ ԵՄ-ը որոշել է քաղաքական, տնտեսական եւ ֆինանսական գործակցություն ծավալել Հարավսլավիայի հետ: Եվրոպան չի ուզում, որ իր ֆինանսական օգնությունն ընկալվի իբրեւ ողորմություն, ուստի ցանկանում է նախապես իմանալ Կոշտունիցայի մտադրությունները Չեռնոգորիայի եւ Կոսովոյի առնչությամբ: Վեդրինի այցի ավարտից հետո կանցկացվի Սերբիայի ֆինանսական կարիքների տեխնիկական գնահատում, ապա Բելգրադ կմեկնի ԵՄ արտաքին օգնության կոմիսար Քրիս Փեթենը: Ավելի ուշ ԵՄ հատուկ պատվիրակությունը կգնահատի Հարավսլավիայի երկարաժամկետ կարիքները:

ԵՄ-Հարավսլավիա բնականոն հարաբերությունների վերահաստատումը նշանակում է, որ եվրամիությունը վերջ է դնում Բելգրադի նկատմամբ 1998 թ. սեպտեմբերին եւ 1999 թ. ապրիլին իր սահմանած օդային ու նավթային արգելքներին, ինչպես նաեւ ԵՄ երկրներում Հարավսլավիայի կառավարության ունեցվածքի եւ Հարավսլավիայում եվրոպական ներդրումների սառեցմանը: Բացի դրանից, ինչպես տեղեկացնում է Փարիզի «Մոնդ» թերթը, եվրամիությունը մտադիր է Միլոշեւիչի վարչակարգի հետ կապ չունեցած հարավսլավական ընկերությունների «սպիտակ ցուցակը» փոխարինել նրա մերձավորների հետ կապված ֆիրմաների «սեւ ցուցակով»: Միաժամանակ շարունակվելու է դիվանագիտական պատժամիջոցների կիրառումը Միլոշեւիչի, նրա հարազատների ու մերձավորների նկատմամբ. ԵՄ երկրներ մուտքի այցագիր չի տանա ընդհանուր առմամբ մոտ 600 մարդ:

Եվրամիությունն ուզում է, որ Սերբիան արագորեն վերադառնա համաշխարհային ֆինանսական ընկերակցություն եւ օգտվի առեւտրային արտոնություններից, ինչպես բալկանյան որոշ այլ երկրներ: «Ներկա փուլում Եվրոպան չի ուզում ֆինանսական օգնությունը կապել Միլոշեւիչին ձերբակալելու եւ միջազգային քրեական դատարան կանչելու հետ», արձանագրում է «Մոնդը»: Յուբեր Վեդրինն ընդգծեց, որ դրանք «իրավաբանորեն կապված չեն, թեեւ կա որոշակի քաղաքական կապ»: Ֆրանսիան գիտակցում է, որ ֆինանսական օգնությունն այժմ կարեւոր է Հարավսլավիային տեւականորեն եվրամիությանը կապելու համար: Օգնությանը դեմ է բերեւս միայն Կոսովոյում ՄԱԿ-ի ներկայացուցիչ Բեռնար Կուշները, որը Լյուքսեմբուրգի հանդիպման ժամանակ հայտարարեց, թե ԵՄ օգնությունն իբր կիրականացվի ի հաշիվ կոսովցիների:

Ինչ վերաբերում է օգնության չափին, եվրամիությունը չի ուզում գերազանցել 1999 թ. մարտին Բեռլինում հաստատված բյուջեն, ըստ որի դեռ 10 միլիարդ եվրո է մնում բալկանյան պետություններին բաշխելու եւ եվրամիջերկրածովյան MEDA ծրագիրն իրագործելու համար: Հավանաբար, MEDA-ին կհատկացվի 6 միլիարդից պակաս: Այնպես որ բալկանյան երկրները կստանան 4 միլիարդից ավելի: Նախատեսվում է սկզբնական շրջանում Սերբիային տրամադրել արտահերթ ֆինանսական օգնություն, որն առաջին 12 ամսում կազմելու է շուրջ 240 միլն եվրո:

Պ. Ք.

Տոկիոն փող չի խնայում ՉԺՀ-ի համար

Ճապոնիան միջոցներ չի խնայում Չինաստանի հետ հարաբերությունները սերտացնելու նպատակով: Այժմ էլ աշխուժություն է նկատվում հոկտեմբերի 12-17-ը ՉԺՀ վարչապետ Չժու Ռոնգչիի ճապոնիա կատարելիք այցի նախօրեին: Չին-ճապոնական այդ վեհաժողովից մի քանի օր հետո՝ հոկտեմբերի 28-ին ՉԺՀ-ն անդամակցելու է Ասիայի համաշխարհային կազմակերպությանը: Համոզված լինելով, որ բարգավաճման նախադայմանը շրջանային կայունության ապահովումն է, ճապոնիան խոշոր ներդրումներ է կատարում ՉԺՀ-ում: Տոկիոն երկյուղներ ունի, որ սոցիալական դժգոհությունները կարող են անկայուն եւ աղետալի վիճակ ստեղծել երկնային կայսրությունում: Բացի դրանից, Պեկինի կենտրոնական իշխանությունների թուլացումը կհանգեցներ ՉԺՀ-ի քայքայման եւ զանգվածային ընդհատակյա արտագաղթի: Այդ դեպքում միլիոնավոր չինացիներ կհեղեղեին ճապոնիան: Պատահական չէ, որ Տոկիոն ջանք չի խնայում, որպեսզի Չինաստանն օր առաջ դառնա Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ:

Երբ այս տարի ԱՄՆ-ն ի վերջո համաձայնեց ՉԺՀ-ի անդամակցությանը, որոշումը մեծ գոհունակությամբ ընկալվեց Տոկիոյում եւ Պեկինում: «Պուեն» հանդեսի վկայությամբ, ճապոնիան նույնիսկ փորձել է ՉԺՀ-ին մասնակից դարձնել հուլիսին անցկացված «Մեծ ութնյակի» գագաթաժողովին:

Ազգ առեւտրի ոլորտում ՉԺՀ-ի ընդգրկումը ձեռնտու է առաջին հերթին ճապոնիային, որի առջեւ կբացվի աշխարհի խոշորագույն շուկան: Ճապոնական «Տոյոտա» եւ «Միցուբիշի» ավտոմոբիլային ընկերությունները, «Մացուշիտա», «Սանյո», «Շարպ» էլեկտրոնային ֆիրմաներն արդեն հետախուզական աշխատանքներ են սկսել Չինաստանի շուկայում: Ճապոնիան արդեն իսկ ՉԺՀ տնտեսական 2-րդ գործընկերն է եւ շուտով կարող է դառնալ առաջինը:

Պ. Ք.

ԱԶԳ

Մշակույթ

Կրկին Երեւանում են Անահիտ եւ Ալեքսանդր Թոփչյանները: Տուն են դարձել: Ու մինչ նրանց հանդիպելը, լուրեր էինք ստանում Թոփչյանների գործունեության մասին Ֆրանսիայում, Բելգիայում, ԱՄՆ-ում: Գրում էին թերթերը: Երկուսի համար էլ անակնկալ էր, որ մեզ մոտ գտան սփյուռքահայ այն թերթերը, որոնք գրել են Անահիտ եւ Ալեքսանդր Թոփչյանների մասին:

– Անչափ ուրախ եմ, որ այդ թերթերը հասել են ձեզ,- ասաց Անահիտը:- Եվ ինձ համար իսկապես հաճելի անակնկալ է, որ դրանք պահել եք:

Շնորհակալություն չասենք այն բանի համար, որ տեսք է արվեր: Ամեն հայ հրաշք է, ամեն ստեղծագործող հայ խորհրդավոր ու լուսեղեն հրաշք: Աշխարհը կսիրի մեզ միայն այն ժամանակ, երբ ինքներս մեզ կարողանանք սիրել, սիրենք բոլորս ու սիրենք ամեն հայի: Լոս Անջելեսում լույս տեսնող «Մասիս» թերթի այս տարվա մայիսի 20-ի համարում տպագրված «Մեր ճրագը եւ մեր չմարող օճախը» հարցազրույցում (որի հեղինակն Անահիտ Երեմյանն է) Անահիտ Թոփչյանն ասում է. «Առանց սիրոյ ոչինչ չի կարելի ստեղծել: Սերը ամեն ինչի հիմքն է, եւ կեանքի, եւ արուեստի: Սիրոյ բացակայութիւնն է, որ հասցրեց Հայաստանը այս ողբալի վիճակին: Չկայ սեր հայրենիքի հանդէպ, չկայ սեր ժողովրդի հանդէպ, չկայ սեր միմեանց նկատմամբ...»: Սեղադրանք չեն: Մարդն իր ցավի համար իրեն չի մեղադրում: Սեզանից ո՞վ կասի, որ արտիստուհին սխալ է:

Բայց, ի պատիվ Անահիտ Թոփչյանի, ասենք, որ նա իր ու իր նմանների, իր ազգակիցների ցավը տառապանք չի սարքում եւ փաթաթում ուրիշներին: Փորձում է փրկվել իր տառապանքից, ճանապարհներ է որոնում: Ստեղծագործում է: Նույն այս հոդվածում «Ինչո՞ւ Հայաստանում չէք ապրում» հարցին Անահիտ Թոփչյանը պատասխանում է. «Ես ապրում եմ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ, քանզի ստեղծագործական աշխատանքի այն ծաւալը, որը ես կարողանում եմ իրագործել Ֆրանսիայում, ցաւօք սրտի, առ այժմ չեմ կարող անել Հայաստանում: Չնայած թատերական երկու լուրջ ծրագիր կայ, որոնք պետք է իրագործեմ Պելգիայի թատերական գործիչների հետ՝ Երեւանում»: «Անահիտ Թոփչեան... Դու մի բան մասունք: Մեր հոգու անհատնում գանձարան: Մեր հմայք ու գեղեցկութիւն: Մեր սիրուած ու մեր կեանքի խայթերին միշտ ուղեկցող ակնառու արուեստագիտուհի: Մեր ճրագ եւ մեր չմարող օճախ: Մեր սրբութիւն: Դու մեր վերեր դիտերային լիալուսինը ես դաս էր նման», գրում է Անահիտ Երեմյանը:

Եթե այս հոդվածը հիացումն է Անահիտ Թոփչյանով, ապա նույն հաղորդի «Նոր օր» թերթում տպագրված Սարգիս Վահագնի «Անահիտ Թոփչեան. ամբողջական մենակատար» հոդվածն արվեստաբանի պրոֆեսիոնալ գնահատական է:

Թեմեյան մշակութային միության Լոս Անջելեսի կազմակերպության, Օնոմեն Գեւորգյանի, Հրաչ Աճեմյանի, Ստեփան Փարթամյանի եւ ՀԲԸՄ «Արտավազդ» թատերախմբի ջանքերով ու հոգատարությամբ մայիսի 21-ին ՀԲԸՄ Ալեք Մանուկյան կենտրոնի թատերասրահում կայացել է Անահիտ Թոփչյանի մեկ դերասանուհու թատրոնի ներկայացումը, որի ժամանակ ...տիսուհին ներկայացրել է ամուսնու՝ Ալեքսանդր Թոփչյանի «Արտագերս» (Փառանձեմ թագուհի) եւ իր հեղինակած «Անհասցէ Տիկինը» մենադրամները: «Մեզի հրամցուեցաւ թատերական բացառիկ երեկոյ մը, ուր բարձրորակ արուեստը տրն ու տիրակալն էր բեմին,- գրում է «Նոր օր»:- Անահիտ Թոփչեան, արդէն բազմավաստակ դերասանուհի,- կրնանք անվարան զինք կոչել մեր արդի թատրոնին փայլուն աստղը,- որոշ մենակատար եւ հեղինակ, իր սմանչելի խաղարկութեամբ, ժամ մը ամբողջ մագնիսացուց, ցնցեց ու վերացուց հանդիսատես թատերասէրներու բախտաւոր այն ընտրանին, որ փութացած էր մասնակից դառնալու հոգեկան այս խրախճանքին...»:

Սարգիս Վահագնը վերլուծում է ամերիկահայ հանդիսատեսի դաշին ներկայացված երկու դրամատեքստը. «Անհասցէ Տիկինը» մենադրամը: «Մեզի հրամցուեցաւ թատերական բացառիկ երեկոյ մը, ուր բարձրորակ արուեստը տրն ու տիրակալն էր բեմին,- գրում է «Նոր օր»:- Անահիտ Թոփչեան, արդէն բազմավաստակ դերասանուհի,- կրնանք անվարան զինք կոչել մեր արդի թատրոնին փայլուն աստղը,- որոշ մենակատար եւ հեղինակ, իր սմանչելի խաղարկութեամբ, ժամ մը ամբողջ մագնիսացուց, ցնցեց ու վերացուց հանդիսատես թատերասէրներու բախտաւոր այն ընտրանին, որ փութացած էր մասնակից դառնալու հոգեկան այս խրախճանքին...»:

Սարգիս Վահագնը վերլուծում է ամերիկահայ հանդիսատեսի դաշին ներկայացված երկու դրամատեքստ՝ «Անհասցէ Տիկինը» մենադրամը եւ Ալեքսանդր Թոփչեանի «Արտագերս» (Փառանձեմ թագուհի) մենադրամը: Քիչ անգամ դերասանի մը տրուած է կարողութիւնը իր իսկ խաղարկութեան խօսքի եւ բառի յղացումն ու շարադրանքը անձամբ իրագործել: Այս պարագային դերասանուհին նաեւ հեղինակն է մենադրամին: Օտարութեան մէջ ապրելու հարկադրուած վտարանդի մարդուն ողբերգութիւնն է տրուածը: Անոր խոհերը, կարօտը, ապրումները մէկ կողմէն եւ միւս կողմէն անոր տուայտանքն ու գուպարը, մարդ մնալու, իր ինքնութիւնը անաղարտ պահելու աննկուն կամքը կը կազմեն տրամին բովանդակութիւնը, սեւեռուած՝ տրամաչիկ պատկերներու, ծիծաղաշարժ դէպքերու եւ խոհերու եղերական կամ հեգնական շարահիւսութեամբ: Հոն, մեր օրերու խեղճացած մարդոց դիմակային անտարբերութիւնն ու անհաղորդ առանձնութիւնը պատկերուած է իրապաշտ յուզականութեամբ: Արդիական մարդը, անօգնական եւ պարտուած՝ դէմ յանդիման կեցած ընկերային, քաղաքական եւ տնտեսական այլասեսակ խոչընդոտներուն...

Երկու մենադրամներուն մէջ ալ, մթնոլորտի եւ հոգեվիճակի յարադրը. «Ալեքսանտր Թոփչեանի «Արտագերս» (Փառանձեմ թագուհի) մենադրամը մեզի համար եղաւ յայտնութիւն մը, հեղինակին գրականագիտական եւ ինքնադատական իրագործումներուն խով աւելցնելով նաեւ անոր թատերագրական բացայայտ շնորհները: Մենադրամ մը, որ իր խիտ, հակիրճ, բայց արտայայտիչ համադրումով եւ հոգեբանական նուրբ խորացումներով յաջողած էր բացայայտել Փառանձեմ թագուհիին ապրած մեծ ողբերգութիւնը, զայն նոյնացնելով մեր ժողովուրդի անցեալ ու ներկայ ողբերգութիւններու զուգահեռականին, սուր այժմէականութեամբ: Սահուն, ճշգրիտ լեզու, պատկերաւոր մտածողութիւն եւ յուզական լիցք՝ առաքինութիւններն են երկին:

Ուրիշ յայտնութիւն մը՝ Անահիտ Թոփչեանի «Անհասցէ Տիկինը» մենադրամը: Քիչ անգամ դերասանի մը տրուած է կարողութիւնը իր իսկ խաղարկութեան խօսքի եւ բառի յղացումն ու շարադրանքը անձամբ իրագործել: Այս պարագային դերասանուհին նաեւ հեղինակն է մենադրամին: Օտարութեան մէջ ապրելու հարկադրուած վտարանդի մարդուն ողբերգութիւնն է տրուածը: Անոր խոհերը, կարօտը, ապրումները մէկ կողմէն եւ միւս կողմէն անոր տուայտանքն ու գուպարը, մարդ մնալու, իր ինքնութիւնը անաղարտ պահելու աննկուն կամքը կը կազմեն տրամին բովանդակութիւնը, սեւեռուած՝ տրամաչիկ պատկերներու, ծիծաղաշարժ դէպքերու եւ խոհերու եղերական կամ հեգնական շարահիւսութեամբ: Հոն, մեր օրերու խեղճացած մարդոց դիմակային անտարբերութիւնն ու անհաղորդ առանձնութիւնը պատկերուած է իրապաշտ յուզականութեամբ: Արդիական մարդը, անօգնական եւ պարտուած՝ դէմ յանդիման կեցած ընկերային, քաղաքական եւ տնտեսական այլասեսակ խոչընդոտներուն...

Երկու մենադրամներուն մէջ ալ, մթնոլորտի եւ հոգեվիճակի յարափոփոխ այլազանութիւնն ու ճոխութիւնը դերասանուհիին ընձեռեցին սմանչելի կարելիութիւններ, իր խաղարկութեան բազմերանգ նրբութիւնները բացայայտելու համար... Անահիտ Թոփչեանի մատուցածը ամբողջական, լրիւ թատրոն էր, միայն ու միայն իր համապարփակ ներկայութեամբ յորդուն եւ մենադրամներուն բառային հիւսուածքով կենդանի...»:

Անահիտ Թոփչյանի ամերիկյան հյուրախաղի մասին է գրում նաեւ Լոս Անջելեսում լույս տեսնող «Համայնապատկերը» (գլխավոր խմբագիր՝ Սարո Գեոդակյան): Ներկայացումը պատրաստվել էր 10-12 օրում, ընդամենը 4-5 բեմական փորձից հետո: «Արդյո՞ք զգնում, որ չափազանց վտանգավոր մի քայլ էր 10-12 օրում պրեմիերա պատրաստել, թեկուզ սեփական տեքստով» հարցին պատասխանելով, արտիստուհին ասում է. «Դա ոչ թե վտանգավոր, այլ արկածախնդիր քայլ էր. դա խաղ էր կրակի հետ, եւ «Մեկ դերասանուհու թատրոնը» կարող էր դառնալ մեկ հանդիսատեսի՝ թատրոն»: Բայց բարեբախտաբար, այդպես չի եղել, եւ մոտ երկու ժամ արտիստուհին դահլիճը պահել է լարվածության մեջ: «Այո, իմ առածը հանդուգն մի քայլ էր, սակայն Աստուծոնն ասում է, որ բանաստեղծությունը եւ արվեստն ընդհանրապես արկածախնդրություն է: Նշանակում է, առանց հանդգնության նորը չես ստեղծի...»:

Սփյուռքահայ մամուլի եւս մի քանի համարներ կան ձեռքիս տակ, որտեղ խոսվում է Անահիտ Թոփչյանի ստեղծագործության մասին, փորձեր են արվում տալ նրա արվեստի սպառիչ գնահատականը (եւ որպես արտիստուհի, եւ որպես գրող): Բավականին մեծ նյութ է: Թերթի հնարավորության սղության պատճառով միտքիս մի մասն միայն բանաստեղծ Վահրամ Հաճյանի գրից մի փոքր հատված, որտեղ խոսվում է Անահիտ Թոփչյան գրողի մասին (գրախոսությունը տպագրել է «Ասպարեզ» թերթը). «...Օրերից մի օր էլ... գիրք հրատարակեց... Կարդացի երկու անգամ: Այլերիս չէի հաւատում: Հրաշալի դերասանուհին դարձել էր հրաշալի գրող: Լեզուն մաքուր է: Հարթ: Նոյնիսկ գեղեցիկ: Ոճը սեղմ, զուսպ, առինքնող: Մտածողությունը պատկերաւոր: Թարմ: Ինքնատիպ: Խոհերը փիլիսոփայական, կեանքի երեւոյթների վրայ հիմնուած: Ամեն ինչ բնական է իր մօտ: Ոչ մի արհեստականութիւն: Ոչ մի անհարկի ու աւելորդ ճիգ: Գրում է այն, ինչ որ զգում է: Պատմում է այնպէս, ինչպէս որ կայ: Ունի վառ երեւակայութիւն: Ցաւ կայ իր մէջ...»:

Լիովին համամիտ եմք Վահրամ Հաճյանին՝ այո, ցավ կա իր մեջ: Գուցե նաեւ հենց դրանով է հմայիչ:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

«Ցաւ կա իր մեջ...»

Սփյուռքահայ մամուլը Անահիտ Թոփչյանի մասին

Անահիտ Թոփչյանը Սերգեյ Փարաջանովի հետ

ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Հանդիսություններ Վենետիկում

Հայ իտալական մշակութային, կրթական, առեւտրա-տնտեսական կապերն ունեն դարավոր պատմություն: Հայ մշակույթի, մասնավորապես հայագիտության զարգացման գործում մեծ ներդրում ունի Վենետիկի Մխիթարյանների միաբանությունը:

Վենետիկի կա Ֆոսկարի համալսարանում հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լեւոն Զեքիյանի գլխավորությամբ ամեն տարի կազմակերպվող ամառային դասընթացները կարեւոր դեր ունեն սփյուռքի ուսուցիչների եւ մշակույթի գործիչների վերապատրաստման, հայոց լեզուն եւ ազգային մշակույթի ավանդները հայ համայնքներում պահպանելու գործում:

Այս տարի՝ օգոստոսի 11-12-ին, նշվեց ամառային արագացված դասընթացների 15-ամյակը: Հանդիսության պատվոնական հյուրերն էին Իտալիայում ՀՀ դեսպան Գագիկ Բաղդասարյանը, ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս, պրոֆ. Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ պրոֆ. Վլադիմիր Բարխուդարյանը, UCLA-ի հայ արդի պատմության ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Ռիչարդ Հովհաննիսյանը, Երեւանի գեղարվեստի ակադեմիայի համակարգչային գրաֆիկայի, արտմենեջմենտի եւ գովազդի ամբիոնի վարիչ, դոկտոր Գրիգոր Վահանյանը եւ «Գարուն» ամսագրի մշակույթի եւ արվեստի բաժնի խմբագիր Ռուզան Ջաֆարյանը: Ժամանել էին հյուրեր Ֆրանսիայից, Բելգիայից, Ավստրիայից, Թուրքիայից:

Առաջին հանդիսությունը սկսվեց համալսարանի Սանտա Մարգարիտա դահլիճում՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խոսքի ընթերցմամբ՝ ուղղված համալսարանի ռեկտոր Մաուրիցիո Ռիսպոլիին:

Ռադիկ Մարտիրոսյանը եւ Մաուրիցիո Ռիսպոլին ցանկություն հայտնեցին շարունակելու եւ ամրացնելու երկու համալսարանների փոխադարձ համագործակցությունը: Ռադիկ Մարտիրոսյանը ԵՊՀ ռեկտորի գրքերը նվիրեց դասընթացի մասնակիցներին: Օրվա գլխավոր բանախոսը՝ պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը այս դասընթացները նկատեց ուղենշային հայագիտություն ուսումնասիրողների համար:

Հաջորդ հանդիսությունը տեղի ունեցավ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի «Հայելիների դահլիճում»: Մխիթարյան միաբանության նախկին աբբահայր գերշ. Ներսես արքազան Տեր-Ներսիսյանի ողջույնի խոսքը կարդաց Նարինե Հովսեփյանը: Լեւոն Զեքիյանը հակիրճ ներկայացրեց դասընթացների կազմակերպման եւ հեռանկարների մասին: 1985-ին միաբանության շարքերից դուրս գալուց հետո Լեւոն Զեքիյանը իր գաղափարների ներշնչանքների աղբյուրը տեսնում է Մխիթար Սեբաստացու մեջ: Այս դասընթացները, որոնց մինչեւ այժմ մասնակցել է 609 մարդ, Մխիթար Սեբաստացու գաղափարների մշտանորոգ կենսունակության արտահայտությունն են: Օրվա բանախոս Վլադիմիր Բարխուդարյանը դասընթացները համարեց հայությանը միաբանելու միջոց:

Առաջին օրվա հանդիսությունը ավարտվեց 1993 թ. Երեւանի Գեղարվեստի ակադեմիայի համակարգչային գրաֆիկայի ամբիոնի հրատարակած «Հայերեն խոսենք» լաստեղական տեսաերիզի, երկրորդ օրվանը՝ «Վենետիկյան միջանվագ» գրքի ներկայացումներով: Հանդիսությունը ավարտվեց «Նանրո նանրո» թատերական ներկայացումով եւ միլանաբնակ դաշնակահարուհի Անի Մարտիրոսյանի եւ տենոր Ժան Անտոյանի համերգներով:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Նորեն հառնեցին բակունցյան կյուրեղիք

Համաժողովրդական տոնախմբություն Գորիսում

երկու օր՝ հոկտեմբերի 7-8-ը, տոն էր Գորիս քաղաքում. վաղուց արդեն ավանդական դարձած եւ «Բակունցյան օրեր», եւ «Գորիսյան աշուն-2000»: Բայց հոբելյանական առիթը քաղաքի անվանակոչության 130-ամյակն էր: Գորիսի քաղաքապետարանի (քաղաքապետ՝ Նելսոն Ոսկանյան) հետ ընդգրկուն այս ծրագիրը նախաձեռնեց եւ անցկացրեց տարածաշրջանում բարի համարում ունեցող «Կյորես» հայրենակցական միությունը (նախագահ՝ Աժ պատգամավոր Սուրեն Խաչատրյան). գիտագործնական կոնֆերանսներ, ցուցահանդեսներ, մարզական հանդիպումներ, մայրաքաղաքում եւ Գորիսում ուսանող երիտասարդության ինտելեկտուալ խաղ-մրցույթներ...

Մաշտոցի փողոցի երկարությամբ՝ գուսան Աշոտի առանձնատնից մինչեւ Սկ. Բակունցի տուն-թանգարան, աշնային բարիքներով ծանրաբեռն սեղանների շուրջ բոլորած, զանգեզուրյան հնաոճ գորգ-կարպետներին թիկնած հյուրընկալ տանտերերն իրենց մոտ էին հրավիրում պատվարժան հյուրերին: եվ տանտերերին մերժելն էր անհնար, եւ տաք թոնրից հանվող փրփուր լավաշի ու խորոված բուրմունքին եւ «ժեվեր-ժեվեր» Քարահունջի օղու գայթակղությանը դիմանալը: Թանգարան ծգվող երթը գլխավորող Սյունիքի մարզպետ Էդուարդ Բարսեղյանը, որը սիրտված էր մոտենալ բոլոր տանտերերին, ժպտալով նեղանում էր. «ժողովուրդ ջան, էսպես մենք ինչ-ո՞ւ կդիմանանք...»:

Պարում էր, ասես, ողջ Գորիսը՝ տատիկների ծեռքերի մեջ ծիգ պահված բարուրներից մինչեւ ալեհեր ծերունիները:

Բակունցի տուն-թանգարանում եւս տարելից էր՝ հիմնադրման 30 տարին: Այդտեղ էլ մի նոր ալիք տվեց տոնը. օրը կրկին բակունցյան հանդեր առավ, որի գույներն ավելի խտացան «Թոթոցը տակը» վայրում, ուր խառնվածների ու կիրքերի միջից նորեն հառնեցին բակունցյան կյուրեղիք՝ Աբա աղերը, Մինան... Սոիտակ ծին էլ...

Նախօրոք հայտարարված «Հայրենի եզեր» թեմայով շարադրության, գեղանկարչական լավագույն ստեղծագործության, կերպարվեստի, ասմունքի մրցույթների հաղթած դպրոցականներին տոնակատարության հանդիսավոր փակման ժամանակ հանձնվեցին մրցանակներ:

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԹԱՂՐԱՆԿԱՐՅԻ ԱՆԿՅՈՒՆ

Նկարիչ Գեորգի Յարալյանին վերջերս հաջողվեց ներկա լինել ոչ միայն «Միսս Հայաստան» մրցույթին, այլեւ տեսնել միսսերի «խոհանոցը»:

ԱԶԳ

Մարզական

ԲՈՔՔԱՍԱՐՍ

Սողոյանը եւ Անտոնյանը բրոնզե մեդալակիրներ

Աշխարհի հերթական 21-րդ առաջնությունն անցկացվեց ԱՄՆ-ի Վերջինիա Բիչ քաղաքում: Ատլանտյան օվկիանոսի ափին գտնվող առողջարանային այս գեղեցիկ քաղաքը հյուրընկալել էր տարբեր երկրներից ժամանած մարզիկների, որոնց թվում էին նաեւ Հայաստանի բազկամարտիկները:

- Առաջնությունը ներկայացուցչական էր եւ բավականին ուժեղ կազմ էր հավաքել,- զրույցի ժամանակ ասաց մարզածեւի հանրապետական ֆեդերացիայի նախագահ, պատմական գիտությունների թեկնածու **Ատոմ Սարգսյանը**: -Բավական է ասել, որ առանձին քաշային կարգերում հաղթողի կոչմանը հավակնում էին տարբերի տարիների 3-4 աշխարհի չեմպիոններ: Եվ ահա այդպիսի մրցակցության պայմաններում մեր մարզիկները հաջող հանդես եկան՝ նվաճելով 2 բրոնզե մեդալ:

Աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիրներ Վազգեն Սողոյանը (ձախից) եւ Նարեկ Անտոնյանը:

60 կգ քաշային կարգում հիանալի հանդես եկավ պեշամալսարանի պատմության ֆակուլտետի 3-րդ կուրսի գերազանցիկ ուսանող Վազգեն Սողոյանը: 18-ամյա մարզիկն այս տարի արդեն ոսկե եւ բրոնզե մեդալներ է նվաճել Եվրոպայի առաջնությունում եւ ահա այստեղ էլ գրավեց 3-րդ տեղը: Վազգենը միայն կիսաեզրափակիչում զիջեց ուժեղ մրցակցին: Այդ բրոնզե մեդալի համար պայքարում կարողացավ հաղթել:

Նույնպիսի հաջողության հասավ նաեւ 80 կգ քաշային կարգում հանդես եկած Նարեկ Անտոնյանը: Հավակնորդի մարզիչները Երեւանի կոնսերվատորիայի ջութակի բաժնի 4-րդ կուրսի ուսանողի համար «պլանավորել էին» տեղ վեցյակում, բայց Նարեկը գերազանցեց սպասելիքները, գրավեց 3-րդ տեղը եւ արժանացավ բրոնզե պարգեւի, թեեւ հաստատես նրա քաշային կարգում առավել մեծ թվով մասնակիցներ կային: Նշենք նաեւ, որ աշխարհի առաջնությանը Նարեկի մասնակցությունը հնարավոր դարձավ կոնսերվատորիայի ռեկտոր Արմեն Սմբատյանի ֆինանսական աջակցության շնորհիվ:

Հայաստանի հավակնորդներ 4 մասնակիցներ իրենց քաշային կարգերում տեղեր գրավեցին առաջին վեցյակում (ինչը մրցանակային է համարվում): Հաջող հանդես եկավ Խաչատուր Չախմախչյանը (70 կգ): Գյումրեցի բազկամարտիկը բրոնզե մեդալ էր նվաճել Եվրոպայի առաջնությունում եւ այժմ էլ շատ մոտ էր պարգեւին: Այս անգամ նա բավարարվեց 4-րդ տեղով: Իր հնարավորություններից ցածր հանդես եկավ միջազգային կարգի սպորտի վարպետ Արսեն Գաբրիելյանը (110 կգ): Նա գրավեց 5-րդ տեղը, բայց, ինչ խոսք, աշխարհի նախորդ առաջնության բրոնզե մրցանակակրից ավելին էր սպասվում: 6-րդ տեղեր գրավեցին Վարդան Ղուկասյանը (90 կգ) եւ Դավիթ Ներսիսյանը (80 կգ): Պետեկամուտների նախարարության աշխատակից, մնետաագիտության թեկնածու Ներսիսյանը հանդես եկավ ավագ տարիքային խմբում (masters) եւ բարձր տեղ գրավեց բավականին սուր պայքարում:

Պրն Սարգսյանը հատուկ նշեց, որ մեր հանրապետության հավաքականն աշխարհի առաջնության նախապատրաստական փուլը, ինչպես եւ նախորդ կարեւորագույն մրցումներից առաջ, անցկացրել է «Պոլիտեխնիկ» մարզակումբում: Ակումբի աշխատողները, նախագահ Սամվել Մեհրաբյանի գլխավորությամբ, բազկամարտիկների համար ստեղծել են բոլոր պայմանները լիարժեք մարզումներ անցկացնելու համար:

Այժմ մեր բազկամարտիկներին՝նոր մրցումներ են սպասում: Այս ամսվա վերջին Աբուդյան քաղաքում կանցկացվի «Կոտայքի դյուցազն» ավանդական մրցաշարը: Մարզածեւի օրացույցն այս տարի համալրվել է. առաջին ուսանողական խաղերի ծրագրում ընդգրկված է նաեւ բազկամարտը: Այս մրցումներով էլ կեզրափակվի մրցաշրջանը:

Ռ. Ա.

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

Հարություն Հակոբյանի եւ Գեղամ Վարդանյանի ավանդական հուշամրցաշարը

Հաղթեցին Դավիթ Սարգսյանն ու Մարիաննա Սահակյանը

Հայաստանի եւ Արցախի սեղանի թենիսի լավագույն վարպետները հավաքվել էին «Դինամո» մարզադահլիճում՝ մասնակցելու հանրապետությունում մարզածեւի հիմնադիր Հարություն Հակոբյանի ու նրա սիրելի սան, Եվրոպայի առաջին հայ չեմպիոն, վաղամեռիկ Գեղամ Վարդանյանի ավանդական հուշամրցաշարին:

Ճիշտ է՝ անցյալի փառավոր համամիութենական մրցաշարերից, որոնց մասնակցում էին Աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն-չեմպիոնուհիները, նշույլն իսկ չի մնացել, բայց եւ այնպես կանայք սեղանների շուրջ ծավալված թեժ պայքարը ցույց տվեց, որ Հայաստանի սեղանի թենիսը չի մահացել: Ունենք տաղանդավոր բազմաթիվ պատանի մարզիկներ, որոնք լուրջ ու նվիրյալ պատասխանատուների կողմից հովանավորվելու դեպքում կարող են դառնալ հայկական սեղանի թենիսի նոր դրոշակակիրները: Ցավալիորեն նույնը չի կարելի ասել թենիսիստուհիների մասին:

Տղամարդկանց մրցումների հաղթողները Հարություն Հակոբյանի այրու եւ թոռների հետ:

Եռօրյա պայքարից հետո տղամարդկանց մրցաշարում հաղթողի տիտղոսը նվաճեց Դավիթ Սարգսյանը, որը բավականին տպավորիչ պայքարում 2-0 հաշվով պարտության մատնեց Եվրոպայի առաջնության մասնակից Մուրադ Ասատրյանին: Դավիթը հաղթեց նաեւ տղամարդկանց զուգախաղերում՝ ընկերակցելով տաղանդաշատ պատանի թենիսիստ Մեսրոպ Ղուկասյանին:

Փորձառուներից հաղթող դարձավ ստեփանակերտցի Գեղամ Գրիգորյանը, որն այժմ մարզվում է Երեւանում:

Հուշամրցաշարում հիանալի հանդես եկավ երկու զավակների մայր, երկար տարիներ սեղանի թենիսը թողած, Գերմանիայի դեսպանության դիվանագետ Սաբրինա Շմիտը. նա միայն հասներ եզրափակիչ մրցմանը:

Կանանց եզրափակիչում Մարիաննա Սահակյանի եւ Արփինե Հարությունյանի խաղը անհրապույր էր՝ նկատի ունենալով առաջինի խաղամակարդակի մեծ տարբերությունը երկրորդի նկատմամբ: Ցավոք, հանրահայտ թենիսիստուհի Աննա Պողոսյանը նախընտրեց մրցումներին ներկա լինել հանդիսականի կարգավիճակով, փորձիկ դստրիկի հետ՝ նախընտրելով մյուս անգամ մասնակցել... տղամարդկանց մրցաշարին:

Մրցաշարը բացարձակ չեմպիոնուհու տիտղոսով ավարտեց Մարիաննա Սահակյանը, որը հաղթեց նաեւ թե՛ կանանց, թե՛ խառը զուգախաղերում:

Սեղանի թենիսի ֆեդերացիայի ու դիվանագետ Ս. Շմիտի կողմից հաղթողներին հանձնվեցին մեդալներ, դիպլոմներ ու մրցանակներ: Հանձնման արարողությանը մասնակցեցին Հարություն Հակոբյանի այրին ու թոռները...

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՓՅԱՆ

ՇԱԽՄԱՏ

Հավակնորդն առաջ է անցնում

Կասպարով-Կրամնիկ՝ 0-5-1,5

Լոնդոնում ընթացող «BGN. աշխարհի առաջնություն» մրցախաղում անցկացվեց երկրորդ պարտիան:

Խաղարկվեց Գրյունֆելդի պաշտպանություն սկզբնախաղը: Սպիտակներով խաղացող Վլադիմիր Կրամնիկը 11-րդ քայլում նորույթ կիրառեց, որից հետո Գարրի Կասպարովը շատ ժամանակ ծախսեց եւ հայտնվեց ցայտնոտում: Հետագայում Կրամնիկը զինվոր շահեց, բայց տարագույն փղերի առկայությունը ոչ-ոքիի մեծ հնարավորություններ էր թողնում Կասպարովին: Սակայն ժամանակի սղության պատճառով աշխարհի չեմպիոնը 39-րդ քայլում սխալվեց եւ ստիպված էր հանձնվել:

Այսպիսով, հավակնորդն առաջ անցավ հաշվի մեջ՝ 1,5-0,5:



ՀԱՅՈԿ

Սամարանչը շնորհավորում է

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Բենուր Փաշայանին եւ գլխավոր քարտուղար Նեան Մունչյանին ուղղված հեռագրում Միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Խուան Անտոնիո Սամարանչը շնորհավորել է մեր օլիմպիական կազմակերպությանը՝ 27-րդ օլիմպիական խաղերի ավարտի առթիվ:

Զրույցի են բռնվել Բենուր Փաշայանը եւ Խուան Անտոնիո Սամարանչը:

«Կարեւոր ջանքերը, որ գործադրել է ՀԱՕԿ-ը ձեր մարզիկների պատրաստման եւ նրանց մասնակցությունն ապահովելու ուղղությամբ, որոշիչ դեր են խաղում օլիմպիական շարժման առաջընթացի հարցում», ասվում է հեռագրում:

ՄԱՐԶԱՀԱՆԴԵՍ

Առողջ մարմնում առողջ հոգի

Մեզանում առաջին անգամ կանցկացվի «Առողջ մարմնում առողջ հոգի» նշանաբանով մարզահանդես, որը նախաձեռնել է Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիան (նախագահ Յուրի Ալեքսանյան): Միջոցառման նպատակն է մրցումների միջոցով համախմբել հանրապետությունում առկա հասարակական-քաղաքական ուժերը, կազմակերպել մասնավոր աշխատանք կատարող մարդկանց ակտիվ հանգիստը, նպաստել նրանց առողջության ամրապնդմանը: Ստեղծվել է կազմկոմիտե, որի նախագահն է օլիմպիական խաղերի եւ աշխարհի բազմակի չեմպիոն Ալբերտ Ազարյանը:

Մարզահանդեսի ծրագրում երեք մարզաձեւ է ընդգրկված՝ սեղանի թենիս, մինի ֆուտբոլ եւ նարդի: Ինչպես տեղեկացրեց մրցումների գլխավոր մրցավար Ռոբերտ Ասատրյանը, մասնակցության հայտեր են ներկայացրել լրատվամիջոցներ, կազմակերպություններ, նաեւ՝ արտասահմանյան երկրների դեսպանություններ, ներկայացուցչություններ: Ֆուտբոլի մրցաշարին հայտագրվել է 24 թիմ, սեղանի թենիսի մրցաշարին 16, իսկ նարդու մրցումներում հանդես գալու ցանկություն են հայտնել ժողովրդական խաղի 80-ից ավելի սիրահարներ (մրցաշարն անհատական է): Մրցումների անցկացման պատասխանատվությունը դրված է կազմկոմիտեի եւ համապատասխան մարզաձեւերի ֆեդերացիաների վրա: Մրցումներում հաջող հանդես եկած թիմերն ու անհատ մասնակիցները կպարգեւատրվեն. մրցանակներ կստանան առաջին, երկրորդ, երրորդ տեղեր գրավողները:

Առաջիկա շաբաթ եւ կիրակի օրերին մայրաքաղաքի «Արաս» մարզաշուքահանդեսային համալիրում կանցկացվեն մինի ֆուտբոլի եւ նարդու մրցաշարերը: Մեկ շաբաթ անց «Հայաստան» մարզական միության դահլիճում մրցասպարեզ կմտնեն սեղանի թենիսիստները:

Փորձիր լուծել



Մաս 2 քայլից

Մեր տպագրած նախորդ 2 քայլանի խնդրի լուծումն է 1.Փh5:

ՖՐԱՆՍԻԱ

Ընտրական քարտերում «Եվրոպական Թուրքիա» նշումը վերացվեց

Ս. թ. մարտ ամսին Փարիզի մերձակա Ալֆորվիլ քաղաքի մունիցիպալ խորհրդական, ՌԱԿ Ֆրանսիայի երջանային վարչության նախագահ Ժան Սիրաքյանը մունիցիպալ խորհրդում ելույթ ունենալիս քաղաքացիական ուղղությունը հրավիրել էր բնակչությանը նոր բաժանված ընտրական քարտերում տեղ գտած լուրջ սխալի վրա: Թուրքիայում ծնված անձանց քարտերում, անկախ բնակավայրից, որպես ծննդավայր նշված էր «Եվրոպական Թուրքիա»: Մինչդեռ Թուրքիան առայժմ Եվրամիության կազմի մեջ չի մտնում: Ռուֆեն խոստացել էր անհրաժեշտ միջոցներ դիմել սխալը վերացնելու համար:

Եվ ահա ՌԱԿ Ֆրանսիայի երջանային վարչությունից ստացված հաղորդումը տեղեկացնում է, որ սեպտեմբերի 12-ին կազմված եւ Ալֆորվիլի բոլոր հայազգի քաղաքացիներին ուղարկված գրությամբ Ռընե Ռուֆեն հայտնել է, որ քաղաքաթեատրանի միջամտությունից հետո ստեղծվել է համակարգչային նոր ծրագիր, որտեղ բացակայում են ինչպես «Եվրոպական Թուրքիա» նշումը, այնպես էլ ուրիշ երկրների հետ կապված այլ սխալներ: Բացի դրանից, ընտրությունների ծառայությունում ձեռքով ջնջել են ամփոփագրերի «Եվրոպական Թուրքիա» նշումը: Թուրքիայում ծնված ալֆորվիլցիների քարտերում այսուհետեւ կնշվի պարզապես «Թուրքիա», ինչպես արվում է ֆրանսիական մյուս քաղաքներում:

Պ. Ք.

Խորհրդարանը գիտության մասին է մտածում

ՀՀԿ-ն կրակի հետ է խաղում

Սկիզբը էջ 1

Քվեարկության ներկայացված երկու տասնյակ օրենսդրական նախագծերից միայն մեկի քվեարկության արդյունքում էր, որ որոշումը չընդունվեց: Խոսքը «Շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքի նախագծի մասին էր, որի համար անհրաժեշտ 46 ձայնից 4-ը միայն չբավարարեց:

Նախագծի տարալուծումը սակայն շուտով սվերվեց, երբ պատգամավորներն սկսեցին ինքնարկել կիսատ մնացած «Աղեսի գոտու վերականգնման մասին» օրինագիծը: Եվ համահեղինակները, եւ ընդհանրապես խորհրդարականները վճռականորեն էին տրամադրված այն շուտափույթ ընդունելու, եւ դա էր պատճառը, որ միաձայն որոշում ընդունվեց օրենքի նախագիծը հատուկ կարգով, այսինքն՝ միաժամանակ առաջին եւ երկրորդ ընթերցմամբ քվեարկել: Հավի առնելով ներկայացված առաջարկները, որոնցից հիմնականը երկար ժամանակ լռության մատնված Նոյեմբերյանի շրջանի՝ երկրաշարժից տուժած բնակավայրերն առանձին կարգով օրենքում ընդգրկելուն էր վերաբերում՝ խորհրդարանը միաձայն՝ 86 կողմով ընդունեց նախագիծը, որին որքան էլ հետաքրքիր է, կառավարությունն առարկություններ չներկայացրեց, եթե հավի առնենք, որ այդ օրենքով գործադիր մարմնի կախվածությունը Ազ-ից սովորականից մեծացված էր:

Երբ խորհրդարանում գիտականն է խոսում

Ա. Խաչատրյանի երազանքներից մեկն այդպես էլ չիրականացավ: Նա մտադրվել էր անձամբ մասնակցել «Գիտության մասին» օրենքի նախագծի քննարկմանը, որը խոստացել էր Գիտությունների ազգային ակադեմիայում: Սակայն այդ հաստատության նախագահ Ֆաղեյ Սարգսյանին դա չիսանգարեց ներկայացնելու «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» օրինագիծը, որի կազմման գործընթացում ահռելի ներդում ունի հենց իր ղեկավարած գիտհաստատությունը: Թերեւս դրանով էր պայմանավորված, որ նախագծում գիտության եւ գիտատեխնիկական առաջընթացը գլխավորապես հենց ակադեմիայով պետք է պայմանավորված լինի: Սակայն ակնառուն ոչ այնքան այն էր, որ օրենքը հստակ չի արտացոլում, թե ինչ կարգավիճակ պետք է ունենա ԳԱԱ-ն: Ըստ Ֆ. Սարգսյանի ներկայացման, այն ոչ թե հասարակական կազմակերպություն պետք է լինի, այլ՝ պետական մարմին: Դա նշանակում է, որ ոլորտը գտնվելու է պետական հոգածության տակ, որքան էլ ներկայումս այն որպես այդպիսին անտեսվում է: Իրականում, սակայն, պետք է կարծել, որ ԳԱԱ-ն դառնալու է կառավարության մի օղակ, քանի որ ուղղակիորեն ենթարկվելու է վարչապետին, իսկ ֆինանսավորման աղբյուրները, որոնք նշված են նախագծում, հիմնականում բյուջետային են: Նախատեսվում է, որ ոլորտը 70 տոկոսով ֆինանսավորվելու է բյուջեից, իսկ մյուս 30 տոկոսը՝ նվիրատվությունների, գրանտների տեսքով: Սա բավականին կարեւոր հանգամանք է, քանի որ ոչ ոքի համար էլ գաղտնիք չէ, թե ինչ կերպ եւ ինչ հաճախականությամբ էին տրամադրվում համապատասխան գումարները: Այս տարվա համար ԳԱԱ-ին նախատեսված 6 մլրդ դրամից հատկացվել է միայն 1 միլիարդը, իսկ արդյունքում ակադեմիայի աշխատողներն արդեն 4 ամիս է աշխատավարձ չեն ստանում:

Այնուամենայնիվ պարզ չէ, թե ինչպես է ակադեմիան մտնելու կառավարության օղակ, եթե օրենքի նախագծում ակադեմիայի նախագահը ընտրվի պետք է լինի: Ընդհանուր առմամբ նախագծի շուրջ ծավալված քննարկումները, որոնք խորհրդարանը չհասցրեց ավարտել, այս հարցերի շուրջ են ծավալվում: Առաջարկություններ եղան նաեւ դրանք հստակեցնելու նպատակով հետաձգել նախագծի առաջին ընթերցումը, որը ընդհանուր տրամադրություն չդարձավ: Հաջորդ եռօրյային Ազ-ն կբարունակի քննարկումները:

Սեկվեստրի հոտ է գալիս

ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը տեղեկացրեց, որ ներկայումս կառավարությունում քննարկվում է բյուջեն սեկվեստրի ենթարկելու հարցը, եւ հաջորդ տարվա բյուջեն Ազ-ին ներկայացնելուց առաջ կառավարությունը կկայացնի համապատասխան որոշում:

Պատգամավոր Սեմյոն Բաղդասարյանի հարցին, թե ինչ վիճակում է կենսաթոշակային ֆոնդը եւ քանի տոկոսով է կատարում իր գործառույթները, վարչապետը պատասխանեց, որ այն բավարար չէ: Անհրաժեշտ է հավաքագրել 2,5 մլրդ դրամ, որը թեեւ իրականացվում է, սակայն շատ թույլ տեմպերի պատճառով դժվարություններ է առաջացնելու: Կառավարությունը չունի այն երջանառու ազատ միջոցները, որոնցով կարողանա փակել առաջացած պարտքերը: Դրան գումարվում է նաեւ այն, որ ներկայումս գրանցված 560 հազար թոշակառուների մի մասը թեեւ գտնվում է արտերկրում, սակայն նրանց հասանելիք թոշակները տրամադրվում են մյուսների հետ համահավասար: Կառավարությունը փորձում է գտնել մեխանիզմներ գոնե մինչեւ հեռացած թոշակառուների վերադարձը նրանց համար նախատեսված գումարները հատկացնել մյուսներին, իսկ վերադառնալուց հետո նրանք կստանան իրենց հասանելիք թոշակներն ամբողջովին:

Կառավարությունում քննարկվել է նաեւ ձմռանը բնակչությանը ջեռուցմամբ ապահովելու հարցը եւ որոշվել է Երեւան, Գյումրի, Սեւան, Ջերմուկ քաղաքները ջեռուցելու համար բյուջեից տրամադրել 2 մլրդ դրամ: Սակայն անհրաժեշտ է բնակչությունից հավաքագրել առաջացած պարտքերը, որի չափերն արդեն վտանգում են ողջ համակարգը:

Գ. Ա.

ՍՓՅՈՒՌՔ-ՍՓՅՈՒՌՔ

Համագործակցում են Ռուսաստանի եւ Եվրոպայի հայերի միությունները

ԵՐԵՎԱՆ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Օրերս Մոսկվայում կայացել է նորաստեղծ «Ռուսաստանի հայերի միության» ղեկավարության հանդիպումը Եվրոպայի հայկական միությունների ֆորումի ընդհանուր քարտուղար Թորոս Սաղերյանի հետ:

Ինչպես «Նոյյան տապանին» հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը ներկայացրել է կազմակերպության ստեղծման նպատակները եւ խնդիրները, ծանոթացրել է առաջիկա ծրագրերին: Թ. Սաղերյանը պատմել է 1998 թ. ստեղծված ֆորումի, նրա խնդիրների, արդեն կատարված աշխատանքների մասին:

Երկու կողմերն էլ խիստ կարեւորել են Ափյուռք-Ափյուռք համագործակցությունը, մասնավորապես՝ միեւնույն եվրոպական տարածաշրջանի հայկական համայնքների միջեւ, նշելով, որ ներկայումս կան բոլոր նպատակահարմար պայմանները, մասնավորապես, Արեւմտյան Եվրոպայի եւ Արեւելյան Եվրոպայի երկրների հայ համայնքների միջեւ սերտ կապեր հաստատելու համար:

Ինչպես նշել է հանդիպմանը մասնակցած ՀՀ ԱԳՆ Սփյուռքի վարչության պետ Տիվան Մովսիսյանը, հանդիպմանը քննարկված կարեւոր հարցը Հայաստանի հետ համագործակցության զարգացումն է եւ, մասնավորապես, տնտեսության վերականգնմանը կոնկրետ ծրագրերով մասնակցություն բերելու հրատապությունը եւ անհրաժեշտությունը:

Կողմերը պայմանավորվել են մշակել կոնկրետ համագործակցության ծրագիր եւ հանդիպումները դարձնել մշտական:

Ըստ Բաքվի, Իրանը հակաադրբեջանական քարոզչություն է վարում

ԲԱՔՈՒ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ANS լրատվական գործակալության հաղորդմամբ, Իրանի արբանյակային հեռուստատեսությունը հակաադրբեջանական քարոզչություն է կատարում: Թեհրանից հեռարձակվող այս հեռուստաալիքը հնարավոր է դիտել նաեւ Ադրբեջանի հարավային շրջաններում: Նշված ալիքի լրատվական թողարկումներում Ադրբեջանը անվանվում է «սիոնիստական հակումներ ունեցող պետություն»: Ադրբեջանի ՁԼՍ-նը եւ մասնավորապես ANS գործակալությունը մեղադրվել են իսրայելա-պաղեստինյան դիմակայությունը իսրայելամետ դիրքերից մեկնաբանելու մեջ: Անդրադառնալով հայ-ադրբեջանական հակամարտությանը, Իրանական աղբյուրը նշել է, թե Ադրբեջանը խիստ ավելացնում է Հայաստանում պահվող ադրբեջանցի ռազմագերիների թիվը: Իրականում, ըստ աղբյուրի, Հայաստանում մնացել են ադրբեջանցի 2 ռազմագերիներ:

Քաղաքացիական ինստիտուտի օժանդակության հիմնադրամ

Հայկական մասնաճյուղ (ԲՀԻՕՀՀՄ)

ԲՀԻՕՀՀՄ-ը արեւելք-արեւելք ցանցային ծրագրի շրջանակներում հայտարարում է մրցույթ՝ 2000 թ. նոյեմբերի 3-10-ը Ռուսաստանի Դաշնության Վորոնեժ քաղաքում անցկացվելիք սեմինարին մասնակցելու նպատակով: Սեմինարն անցկացվելու է Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի ուսուցիչների եւ 14-21 տարեկան պատանիների/աղջիկների մասնակցությամբ: Այն նվիրված է միջէթնիկական եւ տարածաշրջանային կոնֆլիկտների խնդիրներին եւ էթնիկական անհանդուրժողականության զգացումից եւ գոյություն ունեցող կանխակալ կարծիքներից ազատվելու նպատակ է հետապնդում:

Մասնակիցները պետք է տեղյակ լինեն քաղաքացիական հասարակության սկզբունքներին, օժտված լինեն կազմակերպչական ունակություններով, կարողանան կոնֆլիկտային իրավիճակներում գտնել խաղաղ լուծման ճանապարհներ:

Փաստաթղթերն ընդունվում եւ գրանցվում են ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակում մինչեւ ս. թ. հոկտեմբերի 19-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար անհրաժեշտ է դիմել հետեւյալ հասցեով՝ Երեւան 10, Պուշկինի 1, բն. 2, հեռ/ֆաքս 542-119, 541-719, 543-901

www.osi.am E-mail: adavid@osi.am

Քաղաքացիական ինստիտուտի օժանդակության հիմնադրամ

Հայաստանյան մասնաճյուղ (ԲՀԻՕՀՀՄ)

ԲՀԻՕՀ-Հայաստանյան մասնաճյուղը հայտարարում է մրցույթ հրատարակչությունների միջեւ՝ գրականության թարգմանության համար: Թարգմանվող գրականությունը պետք է ընտրվի ԲՀԻՕՀ-Հայաստանյան մասնաճյուղի կողմից առաջարկվող ցուցակներից: Ցուցակներին կարելի է ծանոթանալ ԲՀԻՕՀ-հայաստանյան մասնաճյուղի գրասենյակում:

Դիմումները պետք է ներկայացվեն եւ գրանցվեն ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակում մինչեւ ս/թ. նոյեմբերի 6-ը:

Անհրաժեշտ տեղեկությունների եւ դիմումի ձեւի համար դիմել հետեւյալ հասցեով՝ Երեւան 10, Պուշկինի 1, բն. 2, հեռ/ֆաքս 542-119, 541-719, 543-901

www.osi.am E-mail: andranik@osi.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ասաֆյան խաղատունը հրավիրում է մշտական աշխատանքի գեղեցիկ արտաքինով տղաների եւ աղջիկների:

Աշխատանքային փորձը ցանկալի է:

Դիմել Աբովյան 5/1 հասցեով, կամ զանգահարել 52-11-11

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒԱԳԻՐ

12 հոկտեմբեր

9.00 Հայլուր
9.20 Գ/Ֆ «Լուսանը ելնում է արահետ» (Ռուսաստան)
10.25 Բոհեմ
11.00 Գ/Ֆ «Իսքվիթի վիուկները» (ԱՄՆ)
13.00 Հայլուր
13.20 9-դ հրաշալի
17.00 Հայլուր
17.20 «Արեւիկ». «Եկեք եղբեր»
18.00 «Բարի ակնթարթ»
19.00 Գ/Ֆ «Սուտեր Դեյվի անհավանական արկածները» (ԱՄՆ)
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 1 լուր
21.50 Անկախության այբուբեն
21.55 Պրեմիերա
22.05 Հեռուստասերիալ «Մեղքերի թողություն»
23.00 Կռունկ-2000
23.40 Հայլուր
00.00 Հայլուր (ռուսերեն)
00.05 Հայլուր (անգլերեն)
00.15 Կեսգիշերային ճեղքնթաց
01.00 Գ/Ֆ «Մեսախոս ճանապարհ» (Ճապոնիա)

ՊՐՈՄԵԹԵՎՍ

08.00 «Բարի լույս, Հայաստան»
10.00 Սերիալի պրեմիերա «Մորենա Կլարա»
17.00 Մուլտֆիլմ
17.20 Մանկական ժամ «Նինձյա կրիաները», «Կախարդի յոթերորդ օղակը»
18.05 Սերիալի պրեմիերա «Մորենա Կլարա»
19.00 Լոտո «Շանս»
20.00, 24.00 Լուրեր
20.35 Օրը
21.35 «Ցեղնահարկ»
21.50 Համերգ
22.20 POP-ART
22.55 Գ/Ֆ «Պարզապես անզուգական»

ԿԻՆՈ

10.00 Տոմար
19.05 Չղջիկ
19.30, 21.30, 00.00 Սուրհանդակ
20.00 Մուլտֆիլմ
20.10 Ի դեմ
20.30 Ասպարեզ
22.05 Ոստիկան
22.15 Գ/Ֆ «Դեզիրե» (դետեկտիվ)
00.35 Ակնթարթ
00.40 Գ/Ֆ «Հեղում կանոններից» (դետեկտիվ)
(ավարտին Սուրհանդակ)

ՏՆՏԵՍ

7.00 Բարի առավոտ
10.00, 16.00, 19.00, 01.45 Նորություններ
10.20, 17.55 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
16.20 Մուլտսերիալ «Ուրվական որսացողները»
16.45 «100 %» ծրագիրը
17.15 ... Մինչեւ 16 եւ բարձր
19.24 «Զբոսանք դիմոգավրերի հետ»
19.55 Գործընթաց
20.45 Սերիալ «Կայսրությունը հարվածի տակ»
21.50 «Բարի գիշեր, երեխաներ»
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Եկատերինա Սեմյոնովայի տարօրինակ տղամարդիկ» (դերերում Ա. Աբդուլով, Ն. Ֆիսոն, Ա. Սոկոլով, 1992 թ.)
02.00 Գ/Ֆ «Այլուրտը փրկում է ընտանիքը» (դերերում է. Ֆրանկին, Լ. Սան Ջակոմո, ԱՄՆ, 1995 թ.)

ՌՏՊ

7.00, 8.00, 9.00, 10.00, 12.00, 15.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
7.15-9.40 Բարի լույս, Ռուսաստան
7.20, 8.15 Ընտանեկան նորություններ
7.50, 9.50 Քաղաքային նորություններ
8.50, 10.15 Սեւով սպիտակի վրա
9.30 Մանրամասներ
10.20 Հերթապահ բաժանմունք
10.35 Մուլտսերիալ «Դինկի շունը» (Ֆրանսիա)
11.00 Սերիալ «Մանուելա»
12.30 «Սանտա Բարբարա»
13.30 Թոք-շոու «Ինչ է ուզում կինը»
14.00 Հին բնակարան. Օդեսա
15.30 «Սեւ քարգարիտ»
16.25 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.20 Սերիալ «Հասարակ ճշմարտություններ»
18.30 Գ/Ֆ «Կորածը» (ԱՄՆ)
20.00 Սերիալ «Սիրո պատմություն»
21.30 Մանրամասներ
21.50 Բորիս Գալկինը «Հատուկ ուշադրության գոտում» ֆիլմում
00.30 Լուրերից հետո
00.40 Հերթապահ բաժանմունք
00.55 Դենիել Բերնհարդը «Արյունոտ սպորտ-3» ֆիլմում (ԱՄՆ)
02.30 Թեժ տասնյակ

@rmineo Global Telecommunications. Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1340 Տպաքանակը 3000 Ստորագրված է տպագրության 11. 10. 2000 Գինը 100 դրամ